ԱՀ 167-209=43
430 դ.

Azg
armenian daily

Սեպտեմբեր 1
Չորեքշաբթի
1993

ՌԱՍԿՈՒՐ ԱԶՏԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
9 տարի, թիւ 167 (418)
գինը՝ 10 ռ.
դասիչ 69149
Երեւան 375010
Հանրապետութեան 47
հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

2013

Մրիցին Ընեւեր

Իսրայելի Նախարարների կաբինետը կողմ պաղեստինցիների ինքնավարության նախագծին

Կաբինետի այս գործողությունը 22 ամիս առաջ սկսված մերձավորարեւելյան բանակցություններում առաջընթացի առաջին նշանակալի քայլն է: 16 կողմ, ոչ մի դեմ, 2 ձեռնպահ քվեներով կառավարությունը հաստատեց պաղեստինցիների ինքնավարության գործընթացի սկիզբը, համաձայն որի նրանց պետք է հանձնվեն կառավարման լիազորությունները Գազայում եւ Արեւմտյան ափի երիքով քաղաքում: Երեկ բանակցող կողմերը հանդիպեցին Վաշինգտոնում, մանրամասները մշակելու եւ Արեւմտյան ափում ինքնավարության սկզբունքները բացատրող պայմանագիրը ստորագրելու համար:

Մինչդեռ այս նախագիծը կատաղի դիմադրություն առաջացրեց որոշ հրեաների եւ պաղեստինցիների մոտ: Կաբինետի նիստի ժամանակ դրսում հավաքված 4 հազար հրեա նորաբնակներ հոտած ձվեր ու քարեր էին նետում, իսկ վարչապետ Յիցխակ Ռաբինին կոչում էին «դավաճան»: ■

Կարգավորում

Դիմումներ Հայաստանի դեմ

«Ադրբեջանում անցկացված հանրաքվեի արդյունքներն ամփոփելուց հետո միայն կարելի է ձեռնարկել հետագա քայլեր շրջանում ստեղծված իրադրության կարգավորման ուղղությամբ», ներկայացնելով Ադրբեջանի իշխանությունների պաշտոնական տեսակետը կազմված ԵԱՀԽ Մինսկի խմբի կայանալիք խորհրդակցությունների հետ, ՀՀ ԱԳՆ մամուլի քարտուղար Արամ Սաֆարյանը երեկ հայտնեց, թե այդ դիրքորոշումը չի հակասում Հայաստանի կողմից վերջին մեկուկես ամսվա ընթացքում արած հայտարարություններին:

Չնայած դրան, երկկողմ եւ բազմակողմ շփումները շարունակվում են եւ ըստ երեւույթին ավելի ուշ ԵԱՀԽ շրջանակներում նման մի հանդիպում կկայանա:

Այնուհետեւ, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 853 բանաձեւի եւ ԵԱՀԽ-ի Մինսկի խմբի առաջարկած ժամանակացույցի կարգակցությամբ միջազգային մի շարք կազմակերպություններ, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ պետություններն իրենց մտահոգությունն են հայտնում շրջանում հակամարտության հերթական սրման, հայկական զինված ուժերի ձեռնարկած գործողությունների եւ ադրբեջանական փախստականների թվի աճի, ինչպես [illegible] հակամարտության մեջ դեռեւս [illegible]գրկված շրջանների վրա այդ ճգնաժամային վիճակը տարածվելու կապակցությամբ: Արամ Սաֆարյանը հայտնեց, որ ափխարհի տարբեր երկրներում հավատարմագրված մեր դեսպանների միջոցով ստացել ենք տարբեր երկրների դիմումները: Երեւանում ՀՀ արտգործնախարարությանը իրենց մտահոգությունն են հայտնել ԱՄՆ-ի, Գերմանիայի, Իրանի Իսլամական Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարները: Մամուլի քարտուղարը նաեւ տեղեկացրեց, թե երեկ երեկոյան ԱԳՆ-ին կիանձնվի նաեւ Եվրոպական համայնքի ուղերձը, որը կներկայացնի Հայաստանում Հունաստանի դեսպանը:

Նա նաեւ նշեց, թե դեմարշ-դիմումների տոնից երեւում է, որ որոշակի բարդություններ են առաջացել Հայաստանին միջազգային հանրության եւ այլ երկրների կողմից մարդասիրական օգնության առաքման հարցում, նույնիսկ սպառնալիքի տակ են Հայաստանին անհրաժեշտ երկաթուղային վարկերը: Մամուլի քարտուղարն այն կարծիքը հայտնեց, թե ըստ երեւույթին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը նոր փաստաթուղթ կընդունի Ղարաբաղի խնդրի կարգավորմամբ:

Դրա հետ մեկտեղ, արտգործնախարարության բանբերը դրվատելի փաստ համարեց ԼՂՀ-ի արտաքին շփումների աճը: Նա նաեւ հույս հայտնեց, թե այդ շփումները կլինեն ոչ միայն առանձին պետությունների հետ կաղեր հաստատելու միջոցով, այլեւ ՄԱԿ-ի ու նրա տարբեր հանձնաժողովների հետ հանդագործակցելու ձեւով:

Լրագրողներին հիշեցնելով ՄԱԿ-ի Հայաստանի ներկայացուցիչ Թելմա Օնոն Սալորզանոյի Կառավարության կատարած փաստահավաք առաքելությունը, մամուլի քարտուղարը նշեց, որ օտարերկրյա դիվանագետների մի խումբ արդեն գործուղվել է հանրապետության շրջաններ: Բացի այդ, ԱԳՆ-ի մշակույթի բաժնի ջանքերով նախապատրաստվել է փաստավավերագրական կինոնկար, որը կուղարկվի ՄԱԿ-ին եւ նրա անդամ կազմակերպություններին: Արամ Սաֆարյանը նաեւ նշեց, որ Լեռնային Ղարաբաղի հարցում Հայաստանի պաշտոնական տեսակետը որեւէ փոփոխություն չի կրել:

Ա. Հ.

Զարաբաղ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ԳՐԱՎԵԼ ԵՆ ՋԵԲՐԱՅԻ՞ԼԸ

Քրդական բնակչությունը «Գորշ գայլերի» զրահ

Օգոստոսի 30-ի երեկոյան եւ լույս 31-ի գիշերը, ինչպես նաեւ երեկ առավոտյան Լեռնային Ղարաբաղի հարավում իրադրությունը կրկին սրվել է: Ստեփանակերտի մեր թղթակից ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ հաղորդում է, թե ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբի տվյալներով, օգոստոսի 30-ի երեկոյան ադրբեջանական բանակի կազմավորումները ուղղաթիռներից եւ ծանր հրետանուց հրետակոծել են հայկական պաշտպանական դիրքերը Հադրութի շրջանի հարավ-արեւմուտքում:

Հայկական կազմավորումները, որոնք վերահսկում էին իշխող բարձունքները, ուժգին հակահարված են տվել թշնամուն: Կատաղի մարտերի ընթացքում ԼՂՀ զինված ուժերը ոչնչացրել են թշնամու մի քանի կրակակետեր, խփել 2 տանկ եւ 1 հետեւակի մարտական մեքենա: Հայկական կողմից զոհվել է 2, վիրավորվել 6 զինվոր:

Ղարաբաղի պաշտպանության բանակի հետախուզության տվյալներով, Ղուբաթլիի շրջանում ադրբեջանական «Գորշ գայլեր» կազմակերպության գրոհայիններ որոնես պաշտպանական վահան օգտագործում են տեղի քուրդ բնակչությանը, այդ թվում՝ կանանց եւ երեխաներին: Հայկական ուժերին հրամայված է խաղաղ բնակչության կուսակումների վայրերի ուղղությամբ կրակ չբացել:

Իրենց հերթին ադրբեջանական աղբյուրներն հաղորդում են, թե օգոստոսի 30-ի երեկոյան հայկական ուժերը գրավել են Ջեբրայիլ շրջկենտրոնը եւ 18 տանկերի աջակցությամբ գրոհում են Ղուբաթլիի ուղղությամբ: Միաժամանակ Ղուբաթլիի ուղղությամբ գրոհ է ձեռնարկվում նաեւ հյուսիսից՝ մի քանի օր առաջ գրավված Գյուլեբիդի կողմից: Ըստ նույն աղբյուրների, երեկ առավոտյան հայկական ուժերն արդեն գրավել էին Հազարի գետի ձախափնյա բոլոր գյուղերը եւ շարժվում էին Զանգելանի շրջանի ուղղությամբ: Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հաղորդում է, թե հայերը Ջեբրայիլի շրջանում գրավել են 38, Ղուբաթլիի շրջանում՝ 18 գյուղ:

Ուղղաթիռները ռմբակոծել են Խնձորեսկն ու Կոռնիձորը

Անցած օրերի ընթացքում ադրբեջանական բանակի երկու ռազմական ուղղաթիռներ խախտել են Հայաստանի օդային սահմանը եւ մի քանի ռումբ են նետել Գորիսի շրջանի Խնձորեսկ եւ Կոռնիձոր գյուղերի պաշտպանական դիրքերի վրա: Այս մասին հաղորդում է Նոյյան տարան գործակալությունը: Օգոստոսի 30-ի երեկոյան ադրբեջանական ուժերը հրդեհել են Նոյեմբերյանի Կորի գյուղի պղտաստ այգիները, որից հետո գնդակոծել շրջանի պաշտպանական դիրքերը: Պատասխան գործողություններից հետո կրակը դադարել է: Թշնամին նահանջել է, տալով մարդկային կորուստներ: Մեր կողմից տուժածներ չկան: Ըստ նույն աղբյուրների, ադրբեջանական բանակի տեխնիկայի եւ կենդանի ուժի կուսակումներ են նկատվում Գեղաբեկի Մուրուդարա եւ Նովոիվանովկա գյուղերի ուղղությամբ: Հայ-ադրբեջանական սահմանի այս հատվածում առայժմ միջադեպեր չեն արձանագրվել: «Ազգ»

Էջխարհ

Քլինթոնը պայմաններ է դնում

Նախագահ Քլինթոնը զորքերը Բոսնիա ուղարկելու համար նշել է երեք պայման: Ըստ նախագահի, նա պետք է հավատացած լինի, որ ցանկացած խաղաղության կարգավորում իրագործելի է, արդար եւ պաշտպանվում է Բոսնիայի իսլամների կառավարության կողմից: Իսկ ժնեւում օգոստոսի 30-ին կայանալիք բանակցությունները, որտեղ երեք կողմերը պետք է ներկայացնեին իրենց համաձայնությունը ներկայացված կարգավորման տարբերակին, հետաձգվեցին մեկ օրով: Օգոստոսի 31-ին բոսնիական մուսուլմանների ղեկավար Ալիյա Իզեթբեկովիչը հայտնեց, որ իր երկրի խորհրդարանը չի հաստատի խաղաղության այդպիսի նախագիծը, քանի որ բնիկ մուսուլմանական մի քանի քաղաքներ, որտեղի բնակչությունը դուրս է քշվել, հանձնվում են սերբերին:

Գոբլը խոսում է ռուսական նեոիմպերիալիզմի մասին

Առաջին անգամ վերջին տասնյակ տարիների ընթացքում Ռուսաստանը թույլատրել է Արեւմուտքի ներկայացուցիչներին մասնակցել հակամարտության կարգավորմանը ԽՍՀՄ նախկին տարածքում, համաձայնվելով, որ ՄԱԿ-ի 88 զինվորական դիտորդներ մուտք գործեն Վրաստան, այդպես է գնահատում իրավիճակը «Բոստոն Գլոբ» թերթը իր օգոստոսի 24-ի համարում: Քլինթոնի վարչակազմը նպաստակադրվել է ընդլայնել ԱՄՆ-ի ազդեցությունն այդ տարածքում հակամարտությունները կարգավորելու համար: ՄԱԿ-ում Վրաստանի ներկայացուցիչ Պյոտր Չխեիձեն հայտարարել է, թե հույս ունի, որ արեւմտյան խաղաղարարները կփրկեն Վրաստանը ռուս ազգայնամոլներից եւ վրացական անջատողականներից: «Երբ մենք լինցինք ԽՍՀՄ-ը, շատերն էին ասում, որ մենք դեռ ծնկների վրա ենք կողնենք: Բայց մենք երբեք ոչ չենք գնա», ասել է Չխեիձեն: Արեւմտյան հայտնի փորձագետների, մասնավորապես Պոլ Գոբլի կարծիքով, որը կարենգի հիմնադրամի ավագ խորհրդական է, Ռուսաստանը թույլ կտա ՄԱԿ-ի միայն խորհրդանշական ներկայությունը: Գոբլը դա որակել է որպես «Ռուսաստանի նեոիմպերիալիզմ»:

ՌԻԱ-Սնարք

Արեւմուտքը չի կարող արդել առանց Արեւելքի՞

«Արեւելքից բխող սպառնալիքի» անհետացումը նախադրյալներ է ստեղծում ՆԱՏՕ-ի բլոկի մեջ միավորված Արեւմուտքի երկրների դաշինքի քայքայման համար, ասվում է «Նյու Յորք թայմս» թերթի հրատարակած հոդվածում: Հոդվածի հեղինակը նշում է, որ քաղաքական առումով Արեւմուտքն իրենից ներկայացնում է ոչ թե բնական, այլ վերին աստիճանի արհեստական կազմավորում: «Արեւմուտք» հասկացության հայտնվելու եւ դրա միասնությունը պահպանելու համար հարկ եղավ բնական «Արեւելքի» առկայությունը: Խիստ կասկածելի է, թե Արեւմուտքն այժմ կկարողանա վերադրել այդ բնական անհետացումը: Արեւմուտքի երկրների ռազմաքաղաքական դաշինքի բուլացմանն անխուսափելիորեն կնպաստի նաեւ ԱՄՆ-ի ներքին խնդիրների լուծման վրա ջանքերը բեւեռելու Վաշինգտոնի ներկա վարչակազմի ձգտումը, ասվում է հոդվածում: «Նախագահ Քլինթոնն ունի հավակնոտ ներքաղաքական ծրագիր, բայց նա դիչ է հետաքրքրվում կամ վաս է զգում արտաքին քաղաքականությունը», պնդում է հեղինակը:

ԱՄԵՆՊՐԵՍ-ՏՍՈ-ՏԱՍՍ

Դիտանիա

Բալաղյուրը կայցելի՞ արդյոք Մոսկվա

Հոկտեմբերի վերջերին կամ նոյեմբերի սկզբներին Ֆրանսիայի վարչապետ Էդուար Բալաղյուրը մտադիր է այցելել Մոսկվա: ՌԻԱ-ի թղթակցի ստացած այս լուրն առայժմ ոչ պաշտոնական բնույթ ունի, սակայն կառավարության ղեկավարի մերձավորագույն շրջապատը ոչ միայն չի ժխտում այն, այլեւ ընդգծում է, որ մոտ օրերս, Բալաղյուրի եւ Ելցինի հանդիպման մանրամասնությունների ճշտումից հետո, այն պաշտոնապես կհաստատվի:

Փարիզում այդ այցը կապում են Բիսմարկի Գերմանիայի դեմ ուղղված ռուս-ֆրանսիական դաշինքի հոկտեմբերին նշվող 100-ամյակի հետ: Ակնկալվում է, որ Բորիս Ելցինը եւ Ֆրանսուա Միտերանը ուղերձներ կփոխանակեն, իսկ Փարիզ կժամանի Ռուսաստանի արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւը: Հանդիպավոր միջոցառումներին մասնակցելուց բացի նա պետք է ստորագրի 3 համաձայնագիր: Դրանցից երկուսն առնչում են միջուկային անվտանգությանը եւ այդ բնագավառում Ռուսաստանում օգտագործվող հնացած սարքավորումների ոչնչացմանը Ֆրանսիայի տեխնիկաֆինանսական աջակցությանը, երրորդը վերաբերում է կրկնակի հարկում թույլ չտալուն:

Սնարք

Կոմկուսի ղեկավարի ճառը ետխմված: Մի շինացի լրագրող պետական գաղտնիքները հոնկոնգցի իր գործընկերոջը հանձնելու համար դատապարտվել է ցմահ բանտարկության: Հանձնված փաստաթուղթը վաճառվել էր անցած տարվա հոկտեմբերին մոտավորապես 900 դոլարով եւ պարունակում էր կոմունիստական կուսակցության ղեկավար Չյան Զեմինի ճառը: Հոնկոնգյան թերթը ճառը հրապարակել էր ստանալուց մեկ շաբաթ հետո:

Ֆրանսիացի ակադեմիկոսը նախկին ԽՍՀՄ-ում տիրող իրադրության մասին

Նախկին ԽՍՀՄ-ում ներկայումս տիրող իրադրությունը հիշեցնում է 1922 թվականը, երբ նույնպես ծառացած էր տարբեր ազգային կազմավորումների միավորման հարցը, որոնք ձգտում էին անկախության, բայց այնուհետեւ հայտնվեցին խորհրդային կայսրության կազմում: Այդ մասին օգոստոսի 31-ին «Ֆիգարո» թերթում գրում է ֆրանսիական ակադեմիայի անդամ էլեն Կառեր դ'Անկոսը: Մերձբալթյան երկրները եւ Վրաստանը, գտնում է նա, արդեն ճաշակել են անկախությունը եւ այսօր հայտնվել տնտեսական ու քաղաքական մեկուսացման մեջ, հնարավորություն չունենալով արտաքին ափխարհի հետ հարաբերություններ հաստատել խորհրդային ժամանակաշրջանում եղած հարաբերությունների փոխարեն:

Մոտավորապես նույնն է տեղի ունենում նախկին Միության «սլավոնական տարածքում». Ուկրաինան կուզե նար յուր գնալ առանց Ռուսաստանի, սակայն արբեցումը ծանր նստեց: Իսկ քանի որ ճգնաժամ ապրող եվրոպան չի կարող օգնել Ուկրաինային, այդ հանրապետությունն սկսել է հասկանալ «ռուսական ափխարհի» անխուսափելիությունը:

Այժմ, գտնում է հոդվածագիրը, հարցը լոկ այն է, թե Ռուսաստանը կբավարարվի՞ արդյոք նախկին խորհրդային հանրապետությունների նկատմամբ իր հովանավորչական դերով, թե արդեն գերիշխում են նրա կայսերական դիտավորությունները:

Սնարք

Վաշինգտոն

ԱՄՆ-ը ճանաչում է լոկ Էլչիբեյին

Հայաստանում Միացյալ Նահանգների դեսպանության լրատվական ծառայության ստացած տվյալների համաձայն, պետական դեղարտանենի պաշտոնական ներկայացուցիչ Մայքլ Մակքերրին օգոստոսի 30-ին հայտարարել է, թե ԱՄՆ-ը Աբուլֆազ Էլչիբեյին համարում է Ադրբեջանի միակ օրինական նախագահ, եւ մտահոգություն է հայտնել օգոստոսի 29-ին նրա նկատմամբ վստահության հարցով հանրաքվեի անցկացման առթիվ:

«Մենք հասկանում ենք ռազմական եւ քաղաքական իրադրության ողջ ծանրությունը, որում գտնվում է Ադրբեջանը հունիսից սկսած, հայտարարել է նա, մենք հետեւողականորեն համոզում ենք Ադրբեջանի իշխանություններին վերադառնալ դեպի ժողովրդավարություն: Հանրաքվեն կարող է օգտակար լինել այն ժամանակ, երբ ժողովուրդն ի վիճակի լինի արտահայտել իր կամքը: Սակայն մենք մտահոգված ենք այն հանգամանքով, թե ինչպիսի պայմաններում է անցկացվում հանրաքվեն»:

Անդրադառնալով դարաբաղյան հակամարտությանը, պաշտոնական ներկայացուցիչը հայտարարել է, թե Միացյալ Նահանգները ջանքեր է գործադրում ԵԱՀԽ Մինսկի խմբի՝ կրակի դադարեցման որոշման վրա ազդելու ուղղությամբ: «Մենք ակտիվորեն մասնակցում ենք այդ գործընթացին, հայտարարել է նա, նշելով, թե ներկայումս ԱՄՆ-ի ներկայացուցիչը հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցություններում՝ Ջեկ Մարեսկան Մոսկվայում եւ Անկարայում խորհրդակցություններ է անցկացնում Մինսկի խմբի այլ անդամների հետ»:

ՆՏ

196-94 7706-ամ

digitised by A.R.A.R.@

Սկանդալ

ԱՐՏՅՈՄ ԱԹԱԼՅԱՆՑԸ ՄԵՂԱԴՐՈՒՄ Է ԲԱՐԱՆՆԻԿՈՎԻՆ

Ծրագիրը կասարված է 70-80 տկոսով

Դեռ տարեսկզբին, երբ ՀՀ նախագահի միջազգային տնտեսական հարաբերությունների գծով խորհրդական, 34 ամյա տնտեսագետ, «Իմոդոսերվիս» ընկերության նախագահ, Ռուսասանի քաղաքացի Արտյոմ Աթալյանցը հանդիպեց հայ լրագրողների հետ, խոսացավ մի քանի ամիս անց հանդիպել, սակայն հանդիպումը հետաձգվեց եւ միայն երեկ, վերադառնալով Փարիզ կատարած աշխատանքային այցից, լրագրողներիս ոպասմեց իր անձի հետ կապված վերջին անախորժ դեպքերի մասին, խոսեց իր ծրագրերի ու խոսքերի մասին:

Արտյոմ Աթալյանցի ոպասելով, իր գործընկեր Եվգենի Ռիսլինգը, որը Լաբինսկ քաղաքի Վիտյազ ֆիրմայի տնօրենն է, եկել է Սոչի, իր մոտ հյուր՝ ճնճղակելու որոշ ֆինանսական հարցեր: Սոչիում Ռիսլինգը հայտնաբերել է այն ֆիրմային, որը Լաբինսկում գտնվող մի բանկից, որի հիմնադիրներից է նաեւ նա, 50 մլն ռուբլու վարկ է վերցրել եւ անհետացել: Ռիսլինգի բիկնաղահները այդ ֆիրմայի ներկայացուցչին ստիպել են գոնե մաս առ մաս վճարել եւ նախնական պայմանավորվածության համաձայն, երբ անգեն բիկնաղահները վերցրել են 15 մլն ռուբլին, Սոչիի ներքին գործերի աշխատակիցները նրանց ձերբակալել են որպես դրամաշորթների:

Այնուհետեւ, ասանալով Աթալյանցի քայլվությունը, ներքին գործերի աշխատակիցները կալանավորել են Ռիսլինգին: Պրն. Աթալյանցը հույս հայտնեց, թե 10-15 օր անց նա կազատվի: Ինչ վերաբերում է բիկնաղահների հետ կապված միջադեպին, ապա ըստ Աթալյանցի, դա ոչ թե դրամաշորթություն է եղել, ոնկեռ, այլ բյուրիմացություն կամ սադրանք:

Աթալյանցը վարձում է Սոչիի Ֆրունզեի առողջարանից 2 կմ հեռու գտնվող ամառանոցի տարածքը, եւ երբ դեռքի օրը եկել է տուն, տեսել է, որ այն շրջապատված է ներքին գործերի աշխատակիցներով: Նրանք առանց դատախազի թույլտվության ոպահանջել են, որպեսզի Աթալյանցի բիկնաղահները հանձնեն ոչ զենքն ու զինամթերքը փոխանակությունն անցկացնելու նպատակով: Աթալյանցը 4 ավտոմատ ոպահել է, իսկ մնացած 8-ը հանձնել: Սակայն հաջորդ օրը Սոչիի ներքին գործերի բաժնից զանգահարել են եւ ոպահանջել մնացած 4-ը: Աթալյանցը մերժել է, ոպահանջելով փոխանակել արդեն ստացվածների հետ, սակայն ներքին գործերի աշխատակիցները չեն համաձայնվել եւ արդեն եկել են դատախազի թույլտվությամբ: Սկանդալից խուսափելու համար նախագահի խորհրդականը նրանց է հանձնել ավտոմատները եւ իր անձնական օգտագործման ատրճանակը:

Փաստորեն, Աթալյանցի ասելով, նրանք Ռիսլինգի եւ իր գործերը միացրել են, եւ հետո տարածել կեղծ լուրեր: «Իմ բիկնաղահները չէին կարող հայտարարել, թե ամառանոցի տարածքը Հայաստանին է, որովհետեւ բոլորը գիտեն, որ այն վարձակալվում է», ասաց Արտյոմ Աթալյանցը:

Բացի այդ, դեռ այս տարվա ապրիլ ամսին, երբ այդ զենքը տրվել էր, ՀՀ ներքին գործերի գեներալ-մայոր Կարա Պողոսյանը 2 հեռագիր էր ուղարկել Սոչիի ներքին գործերի բաժին, տեղեկացնելով զենքի համարների եւ թվի մասին: Նույնը կատարել էին նաեւ ՀՀ նախագահի անվտանգության ծառայության վարչության ոպես Ռոման Ղազարյանը եւ Աթալյանցի ֆիրման: Այնպես որ, բանագրավողները տեղյակ են եղել զենքի եւ զինամթերքի մասին: Աթալյանցի կարծիքով, այդ ապրանքի հեղինակը Ռուսասանի անվտանգության նախարար Վ. Բարաննիկովն է, որի հետ իմը եղել է վաս հարաբերությունների մեջ, եւ որը չհապարեց իր ձեռնարկած գործը մինչեւ վերջ տանել: Ընդհանրապես, խորհրդականը այն միտքը հայտնեց, որ Բարաննիկովը չէր սիրում Եղցինի մարդկանց կամ նրա մտերիմներին: Եւ այդ փաստը ոչ միայն Աթալյանցի վարկաբեկման միտումն ուներ, այլեւ հայ-ռուսական հարաբերությունների:

Այժմ Մոսկվա եւ Սոչի են մեկնել Կարա Պողոսյանն ու Ռոման Ղազարյանը, որոնք ՌԴ ՆԳ նախարար Երինի եւ Սոչիի ներքին գործերի աշխատակիցների հետ կքննարկեն բոլոր վիճելի հարցերը: «Ես կարծում եմ, Եղցինին նույնպես տեղյակ են պահել կատարվածի մասին», ասաց Աթալյանցը:

Այնուհետեւ տնտեսագետը հայտարարեց, որ Հայաստանը որպես Արեւելք եւ Արեւմուտք կամրջող բանկային երկիր դարձնելու խնդիրը լուծվել է 70-80 տկոսով: Իսկ մնացած 20 տկոսի իրականացումը կախված է ոչ միայն Հայաստանի բանկային համակարգի ինքնուրույնությունից, այլեւ ոսկու պահեստային պաշարից: Աթալյանցի կարծիքով, Հայաստանի տնտեսության կայունացման համար անհրաժեշտ է 3000 տոննա, որը մոտ 10 միլրդ ռուբլի է: Ըստ նրա, Ռուսասանի Կենտրոնական բանկի կողմից բողարկված «հայկական ռուբլիները» կարող են միայն կայունացնել հանրապետության ֆինանսական իրավիճակը:

Աթալյանցը նշեց, որ թեև վարչապետ Հրանտ Բագրատյանը, ֆինանսների նախարար Լեւոն Բարխուդարյանն ու Հայաստանի Կենտրոնական բանկի նախագահ Իսահակ Իսահակյանը չեն ընդունում իր ծրագիրը, սակայն ինքը գործում է նախագահի բույլտվությամբ եւ անկախ ամեն ինչից, որ ծրագիրն էլ իրագործվի, շահելու է միայն հանրապետությունը:

Նա հույս հայտնեց, որ իր ծրագրի արդյունքներով, նոյեմբերին հնարավոր կլինի Հայաստանը առաջադրել մագուրով եւ հացով, եւ միգուցե նաեւ կարագով: Արտյոմ Աթալյանցը նաեւ անդրադարձավ Ռուսասանում առկա քաղաքական եւ տնտեսական խոչընդոտներին, որոնք հիմնականում ստեղծում են հակակշիռների, նախկին կոմունիստական ուժերը, հույս ունենալով տապալել Եղցինի իշխանությունը եւ տնտեսության քայքայման քաղաքականությամբ գալ իշխանության գլուխ: Այդ գործի դարագլուխներից մեկին նա համարեց ՌԴ Կենտրոնական բանկի նախագահ Գերաշչենկոյին, որն ամեն ինչ անում է ռուբլու սեւեռուկայական գինը դոլլարի նկատմամբ պահպանելու համար, դրանով իսկ ոչնչացնելով ռուբլին: Աթալյանցը խոսացավ նոյեմբերի 1-ին կրկին հանդիպել եւ նորից խոսել կատարած աշխատանքի մասին:

ՀԱՄԼԵՏ ԱԱՍՏՐՅԱՆ

Երեւան

«Արդարությունը կհաղթի»

Երեւան, օգոստոս 31, Սնարք: ԼՂՀ դրոշով առաջին հուշանվերների տեր դարձավ մարդասիրական առաքելությամբ Մեծ Բրիտանիայից Երեւան ժամանած Ռիչարդ եւ Մարիոն Հասկել ամուսնական զույգը: Հուշանվերները պատրաստվել են ԼՂՀ անկախության հռչակման 2-րդ տարեդարձի կապակցությամբ, որ պատրաստվում է նշվելու սեպտեմբերի 2-ին:

Հասկել ամուսիններ, որոնք Լոնդոնում համարվում են հայտնի վիրաբույժներ, որոնք եղել են անձնական խնայողություններից 500 դոլլար հատկացնել Ղարաբաղի օգնության հիմնադրամին, ինչպես նաեւ դարաբաղցի գործընկերներին տրամադրել բանկարժեք դեղամիջոցներ:

«Ես ցավակցում եմ Ղարաբաղի հայերին այն պատճառով, որ նրանք անելիք չունեն Ադրբեջանի կազմում, Սնարքի բոլոր կցին մասնավորապես ասաց Ռիչարդ Հասկելը: Ադրբեջանի կազմում Ղարաբաղի լինելը Մայլիսի հանցագործ սխալն է, ինչի պատճառով դարաբաղցիներ ապիճանաբար կորցնում էին իրենց ազատությունը, լեզուն, մշակույթը, կրոնը: Արդարությունը պետք է հաղթի», եզրափակեց անգլիացի բժիշկը:

Երեկ ԼՂՀ անունից հյուրերին հուշանվերներ հանձնեց Հայաստանի Հանրապետության Հատուկ ծրագրերի վարչության պետ Լեոնարդ Պետրոսյանը: ■

Ադրբեջան

Էլչիբեյը պնդում է, թե հանրաքվեի արդյունքները կեղծված են

Աբուլֆազ Էլչիբեյը երկուշաբթի օրը ԻՖ-ին հայտարարեց, որ ինքը չի ընդունում Ադրբեջանի նախագահին վստահություն հայտնելու վերաբերյալ օգոստոսի 29-ին անցկացված հանրաքվեի «կեղծված» արդյունքները եւ «բոլոր ժողովրդավարական մեթոդներով» կդայքարի «պետական հեղաշրջման արդյունքներն ու հետեւանքները վերացնելու նպատակով»:

Նախնական տվյալների համաձայն, քվեարկած քաղաքացիների ավելի քան 90 տկոսը անվստահություն է հայտնել նախագահին:

Էլչիբեյը գտնում է, որ հանրաքվեն հենց կոչված էր «քաղաքական պետական հեղաշրջումը», որն Ադրբեջանում տեղի ունեցավ հունիսին: Նախագահը հայտարարեց, որ արտակարգ դրության պայմաններում անցկացված հանրաքվեի արդյունքների կեղծումն անվիճելի է, որը վկայում են մի շարք հանգամանքներ: Մասնավորապես, ասաց Էլչիբեյը, որոշ ընտրողներ քվեատուփերն էին գցում մի քանի քվեաթերթիկ:

Մինչդեռ Հեյդար Ալիեւը երկուշաբթի օրը հայտարարեց, որ արդեն կարեւոր չէ, Էլչիբեյը հրաժարական կտա, թե ոչ: Նրա խոսքերով, այդ հարցը հիմա, հանրաքվեից հետո կլուծի խորհրդարանը:

Ադրբեջանի Ժողովատը իր հերթին տեղեկություններ ունի այն մասին, որ օգոստոսի 29-ի հանրաքվեի արդյունքները կեղծված են: Այդ մասին ասվում է հանրաքվեի վերաբերյալ օգոստոսի 31-ին Բաքվում հրաղարակված ԱԺՆ կենտրոնական հանձնաժողովի հայտարարության մեջ: Փաստաթղթով գլխավոր դատախազից պահանջվում է անվավեր համարել քվեարկության արդյունքները:

ԱԺՆ հանձնաժողովի կարծիքով, հանրաքվեն չի կայացել, քանի որ, ինչպես նշվում է հայտարարության մեջ, դրան Ադրբեջանում միջին հաշվով մասնակցել է ձայնի իրավունք ունեցող քաղաքացիների 18 տկոսից ոչ ավելին: Փաստաթղթում հաղորդվում է, որ հանրաքվեն բոյկոտել են 20 կուսակցություն եւ հասարակական-քաղաքական կազմակերպություն:

Հայտարարությամբ համաշխարհային հանրությանը կոչ է արվում չընդունել հանրաքվեի արդյունքները:

Սակայն Մոսկվայում Ադրբեջանի լիազոր ներկայացուցչության տեղեկությունների համաձայն, հանրաքվեին մասնակցել է հանրապետության ձայնի իրավունք ունեցող քաղաքացիների 92 տկոսը, որի 93 տկոսը, ըստ նախնական տվյալների, անվստահություն է հայտնել Էլչիբեյին:

Ադրբեջանի Միլլի մեջլիսի օգոստոսի 31-ին նախաստված նիստը հետաձգվել է մինչեւ հանրաքվեի վերջնական արդյունքների ամփոփումը, այդ մասին հայտնեցին խորհրդարանի մամուլի կենտրոնում: ԻՖ

Բաքու

Ադրբեջանում մեկ միլիոն փախստական

«Ադրբեջանում փախստականների թիվը հասնում է միլիոնի», հայտարարել է օգոստոսի 28-ին «Նյու Յորք թայմս», հիմնվելով ՄՄԿ-ի աղբյուրների վրա: Ֆիզուլիից առեւելք բոլոր ճանապարհները լցված են բեռնատարներով, տրակտորներով եւ սայլերով, որոնք բեռնված են Ադրբեջանի հարավ-արեւմուտքից փախստականների ունեցվածքով, նշում է թերթը: Ադրբեջանում ՄՄԿ-ի ժամանակավոր հավատարմատար Ռոբերտ Ֆիլիպը, որը վերջերս եղավ ադրբեջանա-իրանական սահմանում, հայտնել է, որ իրավիճակը փախստականների հետ ամեն օր ավելի բարդ է, քան որեւէ այլ տեղ: Նույնիսկ ՄՄԿ-ի 2 մլն դոլլարի օգնությունը տեղ չի հասել, քանի որ ՄՄԿ-ը անգործության է մատնված, իսկ ՄՄԿ-ի Ադրբեջանին ուղղակի օգնությունն արգելված է Կոնգրեսի կողմից, տեղում է «Նյու Յորք թայմս»: Սնարք

Ադրբեջանի պետական կոմիտեի դիմումը

Ադրբեջանի բնապահպանության եւ բնօգտագործման վերահսկման պետական կոմիտեն ՄՄԿ-ի Անվտանգության խորհրդին, շրջակա միջավայրի, կրթության, գիտության, մշակույթի հարցերով զբաղվող կազմակերպություններին ու հանձնաժողովներին, ինչպես նաեւ միջազգային դատարանին է դիմել կոչ անելով մարդուն եւ բնությունը պաշտպանել հայերի ագրեսիայից: Կոմիտեի նախագահ Արիֆ Սանանովի ստորագրած փաստաթղթում նշվում է, որ Մեղրկովկասը հայտնվել է լիակատար ապատեղման սպառնալիքի տակ: 5 տարուց ավելի, Ադրբեջանի դեմ Հայաստանի չհայտարարված պատերազմի հետեւանքով շարունակվում է հողածածկույթի եւ բուսածածկույթի ավերումը, ոչնչացվում է կենդանական աշխարհը: Համաշխարհային հանրության ուշադրությունը հրավիրվում է այն բանի վրա, որ հարյուր հազարավոր տարիների ընթացքում կազմավորված փոքր Կովկասյան լեռնաշղթայի կենդանական աշխարհը վտանգի տակ է: Ռազմական գործողությունների հետեւանքով Ադրբեջանի բնական միջավայրին պատճառված վնասը գնահատվում է 1 միլրդ ամերիկյան դոլար: ԵՏ

Ադրբեջանը պատրաստվում է միանալ տնտեսական դաշինքին

Ադրբեջանի կառավարության ենթադրմամբ է ներկայացվել նախկին ԽՍՀՄ մի շարք հանրապետությունները միավորող տնտեսական դաշինքին միանալու նախագիծը: Այդ մասին երեքշաբթի առավոտ ժամանակ հայտնել է Ադրբեջանի ֆինանսների նախարար Սալեխ Սամեդովը: Նրա կարծիքով, դա անհրաժեշտություն է, առավել եւս, որ տնտեսական դաշինքը չի պահանջում ազգային բանկի ենթակայությունը Ռուսասանի Կենտրոնական բանկին եւ հնարավորություն է տալիս ունենալ սեփական տարադրամ: Նախարարի կանխատեսմամբ, եթե Ադրբեջանը չմտնի տնտեսական դաշինքի մեջ, արտադրությունը հանրապետությունում անկում կապրի 30 տոկոսով: ԻՏ

Ադրբեջանը տուսով կստի սեփական տարադրամը

Սանաքը, Ադրբեջանի ազգային տարադրամը տուսով կստվի հանրապետությունում, հայտարարել են հանրապետության ֆինանսների նախարարությունում: Դրանմանքեր բոլորերի գնման հարցը զբաղեցրել է «Ասկա» եւ «Ընդեր» ֆիրմաներից տուսով կստորագրվի Հվեյցարիա մեկնած ադրբեջանական պատվիրակության կողմից: Ինչպես հայտարարեց հանրապետության ֆինանսների նախարար Սալեխ Մամեդովը, համաձայնագրի ստորագրումից մեկ ամիս հետո Ադրբեջանում կսկսեն տպվել ինչպես դրամանիշերը, այնպես էլ արժեթղթերը: Գործարքի արժեքը, ըստ նրա, 3 մլն. դոլլար է: Այդ գումարից 2,7 մլնը կտանեն «Ասկա» ֆիրման, որը կատարելու է մոնտաժման աշխատանքները, 300 հազար դոլլարը կտրվի «Ընդերին» թղթի եւ ներկերի հաշիվ: ԻՏ

Պատանի լրագրողների հանրապետական հավաք

Դպրոցական, պատանեկան թերթերի ու ամսագրերի, դպրոցական ռադիո եւ հեռուստակենտրոնների, «մեծ» մամուլում, ռադիո եւ հեռուստահաղորդումներում պատանիների կողմից պատրաստվող էջերի ու ծրագրերի պատանեկան խմբագրություններին հրավիրում ենք հավաքի:

Ուզում եմ, որ լավի մեր՝ պատանիներիս մասին, ուզում եմ, որ պետք է հանձնարարել հանրապետության պատանի լրագրողների ուժերը, օգնել միմյանց, որ ա վելի հետաքրքիր դառնա մեր դպրոցական մամուլը, ստեղծել միասնական լրատվական հանձնաժող, կազմակերպել ՄԳՀ եւ արտասահմանյան երկրների երիտասարդ լրագրողների հետ, լրագրողական փորձ, բայց գործնական դպրոց անցնել, հրավիրում ենք մեր հավաքին:

Այն տեղի կունենա սեպտեմբերի 17-22 ը, ՀՀ «Միքիթար Սեբաստացի» կրթօջախում: Հավաքի ծախսերի (բացի ճանապարհածախսից) եւ հոգսերի մեծ մասը կիսոգամ մենք սանտերս:

Հավաքի օրերին մասնակիցները ուսումնական կնամարման մեր կրթօջախին, հանդիպումներ կունենան դպրոցում, թերթերի խմբագրություններում, միասին լրագրողական գործադրումներ մասնակի սառիներ կանցկացնեն, հավաքի օրերին կտեսնեն ու կիմանան մեր հանրաքվեի թերը, կքննարկեն ռադիոներ ու հեռուստահաղորդում, կտեսնեն աշխատանքի մասնակցությունը հանձնաժողովներում, նաեւ կնամարման միջոցով, նոր ընկերներ ձեռք կբերեն, կնամարեն, մարզական մրցումներ կանցկացնեն, կերգեն ու կպարեն միասին:

Դե, դուք ինչ՞վ մեր ծրագիրը: Եթե այո, սպասում ենք ձեր հայտերին, մինչեւ սեպտեմբերի 5-ը: Հարմանյուր խմբագրությունից, բոլորանդական կոնֆլիկտից կարող ենք ընդունել միայն 3 պատանի լրագրող՝ իրենց դեկավարի հետ: Բոլոր հարցերին պատասխան ենք պատասխանել 77.11.12 եւ 73.23.30 հեռախոսահամարներով, ամեն օր ժամը 9.00-17.00: Եթե հանձնարարվել եք ու պատրաստվում եք գալ, ձեզ հետ անպայման բերեք ձեր թերթերի, ամսագրերի մի քանի հատ, նաեւ նյութեր, որոնք կրպատմեն ձեր գյուղի, քաղաքի, շրջանի, դպրոցի, ձեր կյանքի ու աշխարհի մասին, որոնցից միասին պետք օրերին տպագրենք մի բերք այն մասին, թե ինչպե՞ս ենք ապրում պատանիներս, ինչո՞վ ենք զբաղվում, ինչի՞ց տխրում, ի՞նչ ենք սիրում ու ի՞նչ ատում, ի՞նչ ենք ուզում պարտ ու ինչպե՞ս ենք պատկերացնում վաղը, երբ մենք էլ մեծ կլինենք... Ի՞նչ գիտեն մեծերը մեր մասին ու ինչպե՞ս ենք հասկանում միմյանց, մենք նրանց ու նրանք մեզ... Այդ բերքը ոգեղեն լինի մեր մասին ու, երեւի, կկոչվի «ես էլ մենք»:

Հրավիրում ենք, անհամբեր սպասում ենք

Ես էլ մենք

ՀՀ «Միքիթար Սեբաստացու» կրթական հանձնախումբ՝ Սանդրական լրատվական գործակալություն, «Ծիր կաթին» դպրոցական երկշաբաթաթերթի խմբագրություն «Ընդեր» դպրոցական ամսագրի խմբագրություն

Մեր հասցեն
375064, Երեւան, Սոնա Բաբաջանյան փ. «Միքիթար Սեբաստացի» կրթօջախի Սայլ դպրոց

digitised by A.R.A.R.@

Երեւան

ՁԵՌԱԿԵՐՏ ԱՂԵՏ, ՈՐԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԿԱՆԽԵԼ

Երեւանում խարխուլ վթարային ոչեսական բնակելի շենքերի թիվը հասել է 261-ի, ինչը 3000-ից ավելի բնակարան է կազմում: Դրանցից 94-ը ոչ բավարար վիճակում եզրին են, իսկ 120-ը առաջին եւ երկրորդ կարգի վթարայնության ասիճանում են: Եւ այնուամենայնիվ, անգամ նրանց մեջ իր ողբալի հետեւանքների մեծությամբ ու մարդկային անտարբերության անընդհատկելությամբ աչքի է զարնում Աջափնյակ բաղամասը:

Ասել, թե այս ընթացքում ոչեսության կողմից դրությունը շտկելու ուղղությամբ ոչինչ չի ձեռնարկվել, այնքան էլ ճիշտ չի լինի: Դեռեւս 1984 թ. ՀԽՍՀ Մինիստրների խորհուրդը «Շահումյանի շրջանի բնակելի զանգվածի շենքերի ու շինությունների հիմնային մասի բնահողի նստվածքի լիկվիդացման եւ բնակելի շինությունների վթարների նախականխման միջոցառումների մասին» որոշում է ընդունել, որը, ինչպես ասաց դրն. Վ. Գրիգորյանը, ըստ էության այդպես էլ չի կատարվել: Դրությունն ավելի է վատթարացել 1988-ից հետո, երբ փախստականները եւ երկրաշարժից տուժածները «գրավեցին» բնակելի ողջ տարածքները՝ նշված 412 խիստ վթարային շենքերից 17-ում բնակվում են գաղթականներ, որոնք առանց բույլտվության մուտք են գործել ազատված բնակարանները եւ դուրս չեն գալիս:

Վլադիմիր Գրիգորյանը հայտնեց, որ Աջափնյակում բնահողի նստվածքի նախականխում փաստորեն հնարավոր էլ չի իրականացնել: Անհնար է նաեւ շենքերի ու շինությունների հիմնամասերի ամրացման համալիր միջոցառումների կատարումը. «Հարցը միայն այն չէ, որ այսօր չկան համապատասխան ոչեսական հատկացումներ: Պարզապես շինինդուստրիան ի վիճակի չէ իրականացնելու նմանօրինակ բարդ աշխատանքներ: Նախագծային ու գիտահետազոտական հիմնարկները տեխնիկապես իրագործելի եւ տնտեսապես նպատակահարմար ոչ մի առաջարկություն չունեն»:

Ահա թե ինչու, շրջանի նախկին դատախազի կարծիքով, այդ բաղամասում կառուցված գրեթե բոլոր շենքերը մոտ ապագայում վթարային կդառնան, ինչն ազգային աղետը միանգամայն իրական է դարձնում:

Այսպիսի դաժան, մոտակա հեռանկարը անհնար է չտեսնելու տալ կամ անգործությունը «հասկանալի» պատճառներով արդարացնել: Մարդկային մի նոր, զանգվածային կորուստը չի ներվի եւ ոչ մի իշխանության: Եւ ինչպես տեղեկացանք, կարծես թե «սայլը տեղից սկսել է շարժվել»՝ ոչ այնքան վաղուց՝ մայիս ամսին ՀՀ կառավարությունը Երեւանի քաղաքապետարանին «Վթարային շենքերի ամրացման եւ բնակիչների վերաբնակեցման մասին» որոշման նախագիծ մշակելու հանձնարարական է տվել:

Քաղաքաշինության «Շենքերի եւ շինությունների շահագործման» վարչության գլխավոր ինժեներ Սոս Այվազյանը հայտնեց, որ այդ աշխատանքն արդեն ավարտված է եւ շուտով կներկայացվի հանրապետության գործադիր բարձրագույն իշխանության դատին: Նրանում նախատեսվում է 4-5 բարձրահարկ, գրեթե պատրաստ շենքեր վերափոխել հյուրանոցային տիպի հանրակացարանների եւ վթարային շենքերի բնակիչներին ժամանակավորապես տեղափոխել այնտեղ:

Չի բացառվում նաեւ պետական, ոչ լրիվ ծավալով գործող հիմնարկների ազատված տարածքներ նույնպես այդ նպատակին հատկացնելը:

Ինչպես ասաց դրն. Ս. Այվազյանը, եթե համապատասխան ֆինանսավորում լինի, ապա ամենաուշը մեկ տարի հետո «անդունդի» վրա ապրող վերջին բնակիչը ամուր ծածկի տակ կփոխադրվի: Ու թեեւ այդ դեպքում էլ «եթե»-ները ավելի շատ են, քան դրանց պատասխանները, կարծում ենք, ճիշտ են բոլոր նրանք, ովքեր գոնե Աջափնյակը «աղեսի գոտի» հայտարարելու միտքն են առաջ քաշում: Չէ որ ոչ ոք չգիտե, թե դեռ որքան են հրաշքով չփլուզվող շենքերը կանգնած մնալու...

ԳՈՒՍԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Սոցիալական

Տրանսպորտայինները սպառնում են նոր գործադուլով

Պետական տրանսպորտի, ուղեւորների փոխադրման հետ կապված խնդիրները տարբեր կերպ են ընկալվում ու տարբեր արձագանքներ են ունենում: Եւ այդ ամենի առյուծի բաժինը հասնում է ոչեսական կառույցներին. ոչեսությունը լավ չի կազմակերպում տրանսպորտի գործունեությունը, ոչեսական տրանսպորտն անկիրթեմ է աշխատում, ոչեսական փոխադրամիջոցների վարորդները թողնում են երթուղին եւ այլն եւ այլն: Այս բոլորն իհարկե չի հակասում ճշմարտությանն ու իրականությանը, սակայն միեւնույն ժամանակ միայն ճշվածները չէ, որ ոչեսական տրանսպորտի աշխատանքների օբյեկտիվ խոչընդոտներն են:

Այրարատի ներսում եւ մերձքաղաքային երթուղիներում այսօր ոչեսական ավտոբուս-տրոլեյբուսների կողքին, արդեն նրանց նեղելով «ադրում եւ աշխատում են» տարբեր տեսի, ճաշակի ու չափի, բայց գրեթե իրարից չտարբերվող գնի մեքենաներ, համահայկական լեզվով ասած՝ «փափախչիներ»: Սակայն, թեեւ արդեն շատ անգամ են բախտ ու դատիվ ունեցել հայտնվել մամուլի էջերում, մեծամասամբ իրենց կամքին հակառակ, այնուամենայնիվ մի անգամ եւս նրանց արժանացնում ենք այդ դատվին, նկատի ունենալով օգոստոսի 30-ին Հայաստանի տրանսպորտի եւ հաղորդակցության աշխատողների արհմիության նախագահ Գագիկ Սահակյանի հոդած հեռագիրը ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանին, որ նշվում է, որ ճանի որ իրենց նախորդ ահազանգերն արդյունք չեն տվել, միջոցներ չձեռնարկելու դեպքում քաղաքային եւ մերձքաղաքային ուղեւորատար ձեռնարկությունները կդիմեն գործադուլի:

Իսկ ինչ ահազանգեր են եւ ինչի վերաբերյալ են դրանք: «Քաղաքում եւ մերձքաղաքային գծերում գործում են «փափախչիներ», որոնք ըստ իրենց հայեցողության կահավորած գազի բալոններով երթեւեկում են այս ու այն կողմ, պոտենցիալ վտանգ ստեղծելով շրջապատի համար, մեր գույքի ժամանակ նշեց դրն. Սահակյանը: Այդ բալոններն ունեն տեխնիկական շատ թերություններ եւ պայթունավտանգ են: Ի դեպ, նման պայթյունի դեպքեր արդեն եղել են: Այդ փափախչիները ոչեսությանը ոչ մի հարկ չեն տալիս, մեքենաներն այդ նպատակով շահագործելու ոչ մի լիցենզիա չունեն, այնուամենայնիվ նրանք շատ ավելի ազատ ու գործունեա են, քան ոչեսական փոխադրամիջոցները»: Այս ամենը խիստ թերի կլիներ, եթե չնշվեր գլխավոր վտանգը. վարորդները ոչ մի ձեւով պատշաճված չեն օրենքով, շարունակեց դրն. Սահակյանը, շատ անգամներ են ոչեսական մեքենաների վարորդները ծեծվում փափախչիներին հովանավորող «պատշաճների» կողմից, որի պատճառով նրանք ստիպված թողնում են երթուղին: Ուրբաթ օրը Սպանդարյան հրապարակում ծեծի են ենթարկվել ոչեսական ավտոբուսների 2 վարորդ: Նույնը կրկնվելու շատ հնարավորություններ կան բժշկական ինստիտուտի, մետրոյի «Երիտասարդական» կանգառի, Երեւան-Էջմիածին, Երեւան-Արմավիր ավտոբուսների կանգառներում: Եւ այս ամենը օրենքի պահապաններն ինչ-որ մոգական ազդեցությամբ չեն ուզում նկատել: Որովհետեւ նշված կանգառներում ավելի զորեղ հսկողություն կա, քան նրանցը: Եւ դա է պատճառը, որ փափախչի տղերքը հարկ վճարում.են ոչ թե ոչեսությանը, այլ իրենց՝ մեզ անհայտ հովանավորներին, որոնց շնորհիվ կարողանում են չեզոքացնել ոչեսական ավտոբուսներին, օրինապահների գործողությունները:

Արհմիութենական խորհուրդը մի քանի անգամ դիմել է բարձր ատյաններին, սակայն այդ դիմումներից հետո լավագույն դեպքում մեկ երկու օր է վիճակն ինչ-որ չափով փոխվել, իսկ այնուհետեւ կրկնվել է նույնը: Երեւի թե ականատես եղած կլինեք, թե ինչպես են ոչեսավտոտեսչության «սարսափազդու» աշխատակիցները ձեւի համար այս ու այն կողմ որոշ ժամանակով գրում տրանսպորտի կանգառներում հավաքված «փափախչիներին»: Իսկ մայրաքաղաքի փողոցներում այլալուջ հետայնդող նրանց կոլեգաները մյուս ավտոբուսները կանգնեցնելուց հետո իրենց հարաբերությունները կարգավորում են չափազանց կարճ խոսակցություններով, որից հետո միմյանցից գոհ շարունակում են հասարակական հանրօգուտ աշխատանքը: Ոչինչ, որ տրանսպորտի եւ հաղորդակցության աշխատողների հանրապետական արհմիութենական խորհրդի տեխնիկական տեսչությունը, որ ոչեսք է բույլտվություն տա շահագործել այդ մեքենաները, ոչ մի նման բույլտվություն չի տվել: Ոչինչ որ, ինչպես ասաց դրն. Սահակյանը նշեց, «մենք նախազգուշացնող եւս մի քայլ ենք ուզում անել՝ 2 ժամանոց նախազգուշական գործադուլ», եւ եթե ոչեսական մարմինները ոչ մի քայլ չձեռնարկեն արդիսվելու վարորդների անվտանգությունը, առաջ կգա տրանսպորտը երկարաժամկետ գործադուլի կանգնեցնելու վտանգը: Եւ դա ավելի «շինիչ» հարված կլինի տրանսպորտի աշխատանքները կարգավորելու ուղղությամբ, եթե «ընթանումով» քայլեր չարվեն, եթե չկանխվեն «անկանխատեսելի» հետեւանքները: Այլապես վաղը կարող է բախումներ առաջանալ ոչեսական եւ ոչ ոչեսական հիմք, ոգեղաղակ վաճառողների, խանութում եւ փողոցում հաց վաճառողների եւ նման այլ միմյանց «ընդդիմադիր» խմբերի միջեւ:

Գ. Ն.

Հայտարարություն

Հայինայբանկը 1993 թվականի սեպտեմբերի 1-ից սկսում է Հայաստանի Հանրապետության առաջին ոչեսական ներքին շահող փոխառության պարտատոմսերի վաճառքը:

Պարտատոմսերը գնելով ցանկացած խնայդրամարկղում՝ Դուք կարող եք առաջին իսկ խաղարկության ժամանակ շահել հազարից մինչեւ մեկ միլիոն ռուբլի:

Յուրաքանչյուր խաղարկության շահումների ընդհանուր գումարը կազմում է 60 միլիոն ռուբլի:

Առաջին խաղարկությունը կկայանա սույն թվականի նոյեմբերի 15-ին, Երեւանում:

Տարեկան կկայանա շահումների 3 խաղարկություն, յուրաքանչյուր 45 օրը մեկ՝ սկսած փետրվարի 15-ից:

Յուրաքանչյուր խաղարկության ժամանակ կշահեն 15 հազար պարտատոմսեր:

Հ. Ղարիբանյանի անվան Երաժշտական դրամատիկական թատրոն

26-րդ թատերաշրջանի բացումը Սեպտեմբերի 10-ին եւ 11-ին

Է. Իոնեսկո., Նոր ներկայացում «Արհամ մեռնում է» (պիես երկու գործողությամբ)

12. Վ. Շեքսպիր «Հուլիոս Կեսար» (ողբերգություն երկու գործողությամբ)

Ներկայացումների սկիզբը ուրբաթ՝ ժ. 15-ին, շաբաթ եւ կիրակի օրերին ժ. 14-ին: Տոմսերը վաճառվում են թատրոնի տոմսարկղերում:

Ընդունվում են կոլեկտիվ հայտեր: Հեռ. 52.47.23:

Տոմսարկղը բաց է ամեն օր ժամը 10-ից 18-ը:

Գյումրի

Նոր ուսարին հին տեսակում

Այսպես դիմավորեց հերթական սեպտեմբերի 1-ը Գյումրիի դպրոցների մեծ մասը: Երկրաշարժից հետո պատրաստված փայտե հավաքովի շինությունները երեւի դեռ երկար կդարձարեն նրանցից շատերին: Վահան Քեռեբանի անունը կրող թիվ 2 դպրոցի սաներն ու մանկավարժները, բարեբախտաբար, նման մտավախություն չունեն: Նրանց է սպասում «Անի» թաղամասում հատկացված 844 աշակերտական տեղով դպրոցական նոր մասնչելի հանձնարարությունը: Միայն թե վերջինիս հիմնավորման կատարված շինարարությունը ոչ շինարարների հետամնացությունից հետո կանգ է առել... Մնում է, որ առանց ուշացման գործի դրվեն այս կառույցի համար «Հայաստան» հիմնադրամի հատկացրած միջոցները, տեղի շինարարները չեր կանգնեն օրինակին (կանխելով նաեւ բնակիչների կողմից սեղված բալանը) եւ կարողանան այն շահագործման հանձնել գոնե մինչեւ 1994 թ. օգոստոսի 1-ը, ինչպես որ արդեն նախատեսվում է:

Իսկ քանի որ այս ուսարին դեռ հարկ կլինի անցկացնել փայտե հին շինություններում, որի հատկապես հատակն ու միջնապատերը տեղ-տեղ շարքից դուրս են եկել, անհրաժեշտ արձակուրդի ընթացքում այստեղ 5 միլիոն ռուբլու հիմնավոր նորոգում է կատարվել: Շինարարների տված նյութերով այն իրականացրել են դպրոցի հինգ մանկավարժներ՝ ղեկավար Սեռոն Փիլոյանի գլխավորությամբ, այդ ամիսներին էլ իրենց առատհալելով աշխատավարձով: Կրթօջախը թեեւ հին տեսակում, բայց նորացված ու պատրաստ կդարձի ուսումնական ամանորը:

Ի դեպ, դպրոցին նաեւ տրամադրվել է 75 կիլովատտ հզորությամբ շարժական էլեկտրաքարշակ: Եթե վառելիք լինի, ծնանն էլ չեն ասայի...

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
Մեր սեփ. թղթակից, Գյումրի

Կառավարության կողմից արտոնագրած

«Անահիտ Շիրակացի»

հայկական հանրակրթական

հայտարարում է 1993-94 ուսումնական ընդունելություն հետեւյալ մասնագիտությունների գծով.

1. Դպրագիտություն (մեկ օտար լեզվի խորացված ուսուցմամբ).
2. Ռուսաբանագիտական բանասիրություն (անգլերեն, գերմաներեն).
3. Ընդհանուր պատմություն (մեկ օտար լեզվի խորացված ուսուցմամբ).
4. Էկոնոմիկա եւ արտադրության կազմակերպում (անգլերեն լեզվի խորացված ուսուցմամբ):

Ուսման տեւողությունը 4 տարի է, կատարելագործված ծրագրերով: Լավ թվանշաններով ավարտող շրջանավարտները հանձնաժողովի դիմումի հիման վրա ստանում են «ռուսաբանագիտական բանասիրություն» եւ «էկոնոմիկա եւ արտադրության կազմակերպում» մասնագիտությունների գծով կրկնակի դիպլոմ: Ուսման վարձը պայմանագրային է: Մեկուկես տարվա ընթացքում գերազանց սովորող ուսանողները հետագայում (ուսուցումը գերազանց շարունակելու դեպքում) ազատվում են ուսման վարձից: Հարգելի պատճառով ուսումը շարունակելուց հրաժարվող անձանց գումարը վերադարձվում է:

Ընդունելությունը հանձնում են՝ բնագրություն հայոց (տուրգ) լեզվից, հնություն օտար լեզվից՝ բանավոր (բոլոր մասնագիտությունները), հնություններ, հայոց լեզվից ու գրականությունից (1 մասնագիտություն), օտար լեզվից՝ գրավոր (2 մասնագիտություն), պատմությունից (3 մասնագիտություն), մաթեմատիկայից (4 մասնագիտություն):

Քննությունների մասնակցելը վճարովի է: Անհրաժեշտ է ներկայացնել սեփական միջոցներով կրթության մասին, բուժծեղեցիկ, 4 լուսանկար՝ 3x4: Գործերն ընդունվում են ամեն օր, բացի շաբաթ եւ կիրակի օրերից՝ ձմեռն սեղ տեղերի 11-ը, ժ. 12-16-ը, հետեւյալ հասցեով՝ Երեւան, Այգեստանի 9-րդ փող., 4ա (Շերմինսկու անվ. միջնակարգ դպրոց, ոչեսական հանձնաժողովի դիմաց): Հեռ. 571650: Քննությունները անցկացվում են սեպտեմբերի 16-ից 19-ը:

ՌԵԿՏՈՐԱՏ

digitised by A.R.A.R.@

Հանձնարարական

Վարկային էմիսիա, դրամավարկային ու վալյուտային քաղաքականություն

Դաշնակցային Ռուսաստանի Կենտրոնական դրամատունը եւ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական դրամատունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքում Դաշնակցային Ռուսաստանի ռուբլին որպես օրինական վճարման միջոց օգտագործելու հետ կապված փոխադարձ պարտավորությունների եւ պահանջների մասին միջպետական համաձայնագրով, համաձայնության եկան հետեւյալ առնչությամբ.

1. Դաշնակցային Ռուսաստանի Կենտրոնական դրամատուն՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական դրամատունը [illegible] է Ռուսաստանի դրամատան [illegible] թվականի նմուշի դրամ [illegible] հետեւյալ պայմաններ [illegible] դեպքում՝

1.1 Հայաստանի Հանրապետության Կենտրոնական դրամատունը 1993 թ. օգոստոսի 1-ից սահմանում է Դաշնակցային Ռուսաստանում գործող վարկային ռեսուրսներ, տոկոսաչափեր, որոնք կիրառվեն այս ամսաթվից հետո կոմերցիոն դրամատներին եւ Հայաստանի Հանրապետության պետբյուջեին, ինչպես նաեւ նախկինում տրված այդպիսի վարկերի երկարաձգման (տարկեցման) դեպքում:

1.2 1993 թ. օգոստոս-դեկտեմբեր ամիսների ընթացքում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական դրամատան կողմից կատարված վարկային էմիսիայի չափերը բերվում են այն չափերի, որոնք համաձայնեցված են Դաշնակցային Ռուսաստանի Կենտրոնական դրամատան հետ:

1.3 Կողմերն իրավասու կազմակերպությունների մասնակցությամբ համաձայնեցնում են փաստացի ձեւավորված հարաբերակցությունը Դաշնակցային Ռուսաստանում ռուբլու գնողունակության եւ Հայաստանի Հանրապետությունում ռուբլու գնողունակության միջեւ, որպեսզի մինչեւ տարեսկզբի գներ վերագնահատման համար, որպեսզի մինչեւ օրենքդրական գնողունակությունը արտահայտվի Հայաստանի Հանրապետության դրամատների եւ Դաշնակցային Ռուսաստանի դրամատների հավասարակշիռների վրա:

1.4 Հայաստանի Հանրապետության Կենտրոնական դրամատունը մինչեւ 1993 թ. օգոստոսի վերջը կհամաձայնեցնի ՌԴ Կենտրոնական դրամատան համաձայնության կանոնների հետ Հայաստանի տարածքում գործող կոմերցիոն դրամատների գործունեությունը կարգավորող իր կարգադրությունները եւ կհաստատի մի կարգ, ըստ որի Հայաստանի դրամատները ավտոմատ կկիրառեն ՌԴ Կենտրոնական դրամատան կարգադրությունները վարկի կարգավորման եւ կանխիկ շրջանառության համակարգի սկզբունքային հարցերի վերաբերյալ:

1.5 Հայաստանի Կենտրոնական դրամատունը կանդրադառնա ՌԴ Կենտրոնական դրամատանը վիճակագրական եւ հաշվառական հաշվետվություններով, այն ձեւերով եւ կարգով, որոնք գործում են ՌԴ դրամատնային համակարգում, ՌԴ Կենտրոնական դրամատան ստորաբաժանումների հետ համաձայնեցված ժամկետներում:

2. Սահմանել, որ այսուհետեւ, մինչեւ Հայաստանում 1961-1992 թթ. դրամանիշերի շրջանառությունից դուրս հանելու աշխատանքների ավարտը Հայաստանի կոմերցիոն դրամատները Ռուսաստան գործուղման մեկնող իրենց հաճախորդներին հուլիս-օգոստոս ամիսներին գործուղման ծախսերի միջոցներ են վճարում 1,3,5 եւ 10 ռուբլիանոց դրամանիշերով, անկախ բողարկման տարուց եւ Ռուսաստանի դրամատան 1993 թ. դրամանիշերով: Ռուսաստանի դրամատունը գործուղման ծախսերի անհետաձգելի վճարումների աղահովման, ինչպես նաեւ Ռուսաստան հանգստի մեկնող անձանց համար Հայաստանի Կենտրոնական դրամատան տրամադրության տակ է առանձնացնում ..... մլրդ ռուբլի, դրանք փոխադրելով ՀՀ ԿԲ-ի բդրակցական հաշվի վրա ՌԴ ԿԴ-ում: Ընդ որում, ՌԴ-ում օրինական վճարման միջոց հանդիսացող դրամանիշերի տրման կարգավորման կարգը որոշվում է Հայաստանի Կենտրոնական դրամատան կողմից:

3. Հայաստանի Կենտրոնական դրամատունն անհապաղ որոշում է ընդունում կոմերցիոն դրամատներին եւ Հայաստանի բյուջեին հատկացվող վարկերի չափերի ՌԴ ԿԴ-ի հետ համաձայնեցման կարգը եւ ժամկետները, ինչպես նաեւ իր վարկերի տոկոսաչափերը ՌԴ ԿԴ համապատասխան ցուցանիշի մակարդակին հասցնելու մասին, նկատի ունենալով այն, որ հետագայում Հայաստանի ԿԴ-ի կողմից կոմերցիոն դրամատներին եւ Հայաստանի բյուջեին հատկացվող վարկերի հատկացումը պիտի կատարվի միայն ՌԴ ԿԴ նախնական համաձայնեցման առկայության դեպքում:

4. Հայաստանի ԿԲ-ն աղահովում է մոտակա ժամանակներս Հայաստանի Հանրապետությունում 1961-1992 թթ. դրամանիշերի շրջանառությունից հանելու կազմակերպումը եւ անցկացումը. ՌԴ ԿԴ-ի հետ համաձայնեցված ժամկետներում եւ կարգով:

Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ՌԴ ԿԴ-ի կողմից համապատասխան օրենսդրական եւ գործադիր մարմինների անհրաժեշտ համաձայնությունը ստանալուց հետո:

Երկու խոսք փաստաթղթի առթիվ

Ինչպես երեւի հասկացաք, ձեր ուշադրությանն է ներկայացված մի եզակի փաստաթուղթ, որտեղ բացահայտորեն արտացոլված է այն, ինչը պիտի հասկանալ «Հայաստանը ռուբլու գոտում է մնում» ասելով:

Ինչպես տեսնում եք, իրականում «գազանն» այնքան սարսափելի չէ, որքան մենք էինք պատկերացնում:

Ընթերցողներին մոլորությունից զերծ պահելու համար նախ նշենք, որ ըստ այս փաստաթղթի եւ առհասարակ Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռուբլին որպես օրինական վճարման միջոց ճանաչելն ամենեւին չպետք է հասկանալ, որ այս դեպքում բացառվում է մեր սեփական դրամի զուգահեռ շարժը: Հակառակը, վերջին իրադարձությունները գալիս են հաստատելու, որ ամենայն հավանականությամբ հենց այդպես էլ կլինի: Ռուսաստանում պատրաստվող հայկական «ժամանակավոր» ռուբլին զուտ պարտադիր ասպիճան է ժամանակ շահելու համար, մինչեւ հիմնավորապես սեփական արժույթին անցնելը:

Ըստ էության, ներկայացված փաստաթղթի մեջ ոչ մի անսովոր, անակնկալ բան չպիտի տեսնել: Բնական է, որ այլ երկրի դրամական միավորը որպես օրինական վճարման միջոց օգտագործելիս անպատճառ պետք է սեփական վարկային քաղաքականությունը համարեցնել դրամի տեր պետության վարած քաղաքականության հետ: Հակառակ դեպքում «ֆինանսական խաղերով» վարկային ռեսուրսների վակուում ստեղծելով կարելի է միջոցների հոսքն ուղղել ցանկացած, միջոցի տիրոջ համար ոչ նպատակահարմար կողմը: Ինչից էլ, վաստորեն, խուսափում է Ռուսաստանը:

Տագնապահարույց էր, իհարկե, «մեր» եւ «ռուսական» ռուբլիների գնողունակության տարբերությունը, որը անկասկած կգործեր ոչ ի օգուտ հայաստանաբնակների, սակայն փաստաթղթի 1.3 կետը կարծես թե փորձում է հարթել այդ «կնճիռը»:

Բնական է, որ հաշվեվարություններ պիտի կազմվեն եւ բնական է, որ դրանց ժամկետներն ու ձեւերը պիտի համաձայնեցվեն, հակառակ դեպքում խառնաշփոթն անխուսափելի է:

Իսկ որ 1961-92 թթ. դրամանիշերի շրջանառությունից հանելու ժամկետներն ու կարգը պիտի համաձայնեցվի Ռուսաստանի Կենտրոնական դրամատան հետ, այս փաստն ամենեւին «կրիմինալ» չի պատկանում եւ թե լադրված է երկու կողմերի շահերից, եթե չասենք ավելին. հանրապետություն անընդհատ մուտք գործող հին դրամական զանգվածի անվերահսկելի ներհոսքի պայմաններում պետք է կարծել, որ շրջանառությունից սրանց դուրս հանելու պայմանները Ռուսաստանի հետ համաձայնեցնելը նշանակում է նաեւ «դրամափոխանակության» համար պատասխանատվությունը կիսել մի պետության հետ, որը կարող էր նաեւ «ձեռքերը լվանալ» այդ գործից:

Ինչեւէ, սեպտեմբերի 7-ը շատ հարցերի վրա լույս կսփռի: Սակայն մինչ այդ, կարծում եմ, որ մեր՝ Ռուսաստանի օրինական վճարման միջոցից օգտվելու փաստը (հնարավորությունը) Հայաստանի ինչպես ֆինանսական համակարգի, այնպես էլ տնտեսության համար ամբողջապես, պետք է դրական ազդեցություն ունենա եւ հարկ է, որ դրականապես ընկալվի:

ՄԱՐԳԱՐ ՄԵՆԵՋՅԱՆ
Մեկնաբան

Շրջան

«Կասպիական տենդի» նոպաները

Բաքվի «Սոնար» նավթային ընկերության պատվիրակության այցը, որը Լոնդոն էր ժամանել ադրբեջանական նավթի ճակատագրի վերաբերյալ բանակցությունների համար, լրագրողների համար այդպես էլ հանելուկային մնաց: Թե ո՞ր հյուրանոցում են իջեւանել Ադշերոնի, Սումգայիթի եւ Նավթային քարերի գործակալները, չգիտեին նույնիսկ հանրահայտ Ֆլիթ-սթրիթի մեկնաբանները: Գաղտնիության ոլորը չբարձրացրին նաեւ արեւմտյան ընկերությունների ներկայացուցիչները, որոնք երկխոսություն էին կազմակերպել ադրբեջանցիների հետ փակ դռների հետեւում:

Ադրբեջանի ներկայացուցիչները բանակցությունները հանկարծակի ընդհատեցին եւ վերադարձան հայրենիք: Դա տեղի ունեցավ հենց այն օրը, երբ Լոնդոն պիտի ժամաներ Ադրբեջանի ոմն ղեկավար, որը պետք է հանդուրժարի բերեր խորհրդակցությունների արդյունքները եւ նույնիսկ ստորագրեր մի շարք ընկերությունների հետ նախնական արձանագրություն «սեւ ոսկու» միանգամից երեք հանքավայրերի մշակման վերաբերյալ:

Մի խոսքով, կատարյալ խառնաշփոթ: Ի դեպ, մի բան պարզ էր հենց սկզբից՝ ԽՍՀՄ փլուզման պահից: Արդեն այն ժամանակ, 91-ի դեկտեմբերին, նախկին Միության բնական պաշարների մանրամասն քարտեզների վրա, որոնք կախված էին անդրազգային կոնսորցիումների կենտրոնատեղերում, տեղի ունեցավ «փոփոխություն». մի գիշերվա մեջ Կասպից ծովի շուրջ ծագեց հսկայական մագնիսային դաշտ, որը դեղի իրեն քաշեց Արեւմուտքին նախկինում չտեսնված ուժով:

Երբ հոլտս եւ հզորագույն «Շեւրոնը», չնայած Ղազախստանի լրացուցիչ ուսահանջներին, որոնք վերաբերում էին այնտեղի նավթային հանքավայրերի պայմաններին, ստիպված էր համաձայնվել Ալմա Աթայի հետ եւ, ինչպես ասում են, դեղի հեռավոր տափաստանները շարժել իր հզոր ենթակառույցները, բոլորի համար պարզ դարձավ մի բան. «Կասպիական ֆենոմենը» շուտով իր մասին լրջորեն իմաց կտա: Իսկ երբ ստորագրվեցին դեղի Արեւմտյան Եվրոպա թուրքմենական բնական գազի փոխադրման մասին արձանագրությունները, պարզեցին Կասպից ծովն առաջ քաշվեց անդրազգային կապիտալի աշխարհաստրատեգիական դասավորության առաջին տեղերից մեկը: Եւ ահա ծրագրի գլխավոր դերակատարը՝ դեղի արդյունաբերական երկրներ վառելանյութի խոշոր առաքող մոտ ժամանակներս պետք է լինի Ադրբեջանը:

Լոնդոնում այդ հանդիպման «հետնախորհրդում» հայտնի դարձան բավականին հետաքրքիր թվեր. նախկին Խորհրդային Անդրկովկասի հայտնի նավթահանքերը մշակելու միայն իրավունքի համար նավթազմաղաքական անգուշակելիությամբ: Որպեսզի չդառնանք այդ երկու քաղաքներից որեւէ մեկի պատանդը, լավ է ուսենալ Կասպից ծովի նավթի տեղափոխման երկու ուղի»:

Մի խոսքով, նոպատակը հայտնի է, խնդիրները՝ որոշակի: Իսկ ո՞ր մոնոպոլիաներն են մրցակցում Հուսեյնովի կազմավորումները, որոնք պատարել էին Բաքուն, եւ նրան աջակցող Հեյդար Ալիեւը շեշտակիորեն իրենց ձեռքը վերցրին իշխանությունը: Միգուցե նրանք այնքան էլ չէին ցանկանում Ադրբեջանի դեպական կնիքը տեսնել հանրապետության համար անշահավետ գործարքի տակ: Հնարավոր է: Որովհետեւ, հենց որ Էլչիբեյը տպալվեց, Լոնդոնում տագնապով սկսեցին խոսել Ադրբեջանի նոր ղեկավարների նախկին դայմանավորվածություններից հետ քաշվելու մասին:

Այն, որ այժմ խաղը կընթանա «յուրաքանչյուրն իր համար» սկզբունքով, Անկարայում շատ շուտ հասկացան: Իսկ եթե այդպես է, ապա գլխավորը ադրբեջանական խոստումնալից նավթագծում բուրգական բաժինն ամեն կերպ փրկելն է: Այդ բաժնում հիմնականը հսկողությունն է առաջա նավթամուղի նկատմամբ, առնվազն նրա Միջերկրականի մասում: Իսկ դրա համար անհրաժեշտ է համոզել Ադրբեջանին, Թուրքմենստանին, Ղազախստանին, եւ դրա հետ մեկտեղ նաեւ Ռուսաստանին, որ իրենց նավթի հետագա արտահանումը Բոսֆորի եւ Դարդանելի միջով ստիպված են շեշտակիորեն կրճատել՝ բուրգական ափերի էկոլոգիական անվտանգության ապահովման դատրվակով եւ որ հատկապես Անդրկովկասի խոշոր վակատարի անցկացումն անխուսափելի է:

«Մենք, իհարկե, չենք ցանկանում վերացնել 1936 թ. Մոնրոյում կնքված նեղուցներում նավագնացության ազատության մասին համաձայնագիրը: Սակայն այդ փաստաթղթին որոշակի մարտահրավեր նետելուց մենք չենք վախենա», ասաց Թուրքիայի ԱԳ նախարարության ներկայացուցիչ Թեֆիկ Օֆյայուզը:

Լոնդոնյան «նավթային ակումբում» ի գիտություն ընդունեցին Անկարայի դեմարշը: Ինչպես, ի դեղ, նաեւ Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Ալբերտ Չերնիշովի հայտարարությունն այն մասին, որ «մենք ոչ մի երկրի չպետք է թույլ տանք իրականացնել շրջանային հեգեմոնիա»: Այսպես թե այնպես, կովկասյան պաշարների համար մարտը դեռ առջեւում են: Համենայն դեպս, «Բրիթիշ փեթրոլիումի» հասարակության եւ մամուլի հետ կապերի ծառայությունը նախատեսում է բանակցությունների երկար շարք:

ՊԱՎԵԼ ԲՈԳՈՍԼՈՎ
Լոնդոն

ԲՈՒԺՈՒՄ ԱՌԱՆՑ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ

էքստրասենս Ա. Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ բուժում է՝ երեւանյան հիվանդություն, գիշերամիզություն, խրոնիկական տոնզիլիտ, բրոնխոասթմա, հայմորիտ, ֆոնտիտ, գլխացավ, գլխապտույտ, հոդացավ, նյարդային համակարգի հյուծվածություն, օրգանների ֆունկցիոնալ խանգարումներ:

Հասցեն՝ Երեւան, Մուրացանի փ. 115, երկաթգծի հիվանդանոց, 5-րդ հարկ, 518 սենյակ

Ընդունելությունն ամեն օր (բացի շաբաթ եւ կիրակի օրերից) ժամը 09:00-12:00, :

հեռախոս 45-60-34

digitised by A.R.A.R.@

Գյուղատնտեսություն

ԻՐԱՎԱԿԱՆ ՎԱԿՈՒՈՒՄԸ ՊԵՏՔ Է ԼՐԱՑՎԻ. ԹԵՎ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՈՒՏՔԻՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ Է

Հայրենական եւ արտասահմանյան փորձի ոչ մեծ վերլուծական

Ֆերմերային տնտեսության զարգացման արշալույսը վերաբերում է առաջին հերթին Անգլիային, որտեղ տնտեսավարման այդ ձեւի համար բարենպաստ պայմաններ առաջացան դեռեւս 15-16-րդ դարերում: Սակայն բուրժուական հարաբերությունների ծնունդ հանդիսացող այդ նոր տնտեսավարումն իր առավել մաքուր՝ դասական դրսեւորումն ստացավ Ամերիկայի Միացյալ Նահանգների պայմաններում: Դա հայտնի է «գյուղատնտեսության զարգացման ամերիկյան ուղի» բնորոշմամբ՝ հիմնված ազատ, մրցակցային տնտեսավարման սկզբունքի վրա: Այդ սկզբունքը ներկայումս գերակշռող է շատ երկրներում, երբ նույնիսկ խոշոր գյուղատնտեսական ֆերմաների շրջանակներում նախընտրությունը տրվում է փոքր չափերին՝ ֆերմերային տնտեսավարմանը, որն ավելի արդյունավետ է եւ ռացիոնալ:

Ինչո՞ւ է մեզանում ֆերմերության (գյուղացիական տնտեսության) «ընկալումը»

Մինչեւ այժմ խորհրդային բազմաբնույթ գրականությունում, հասկանալի պատճառներով, ֆերմերային տնտեսության մասին աշխատություններ ու մենագրություններ եւ նույնիսկ ակնարկներ գրեթե չկան: Դա տասնամյակների խեղաթյուրված քաղաքականության հետեւանքն է, քաղաքականություն, որը բնական կամ անընդունելի էր համարում այն ամենը, ինչը հակառակորդ «լագերի» արգասիքն էր:

Ֆերմերային տնտեսության հիշ թե շատ տանելի պարզաբանումը կարելի էր հանդիպել միայն հանրագիտարանի էջերում. «Ֆերմերային տնտեսությունը կապիտալիստական երկրներում մասնավոր ապրանքային գյուղատնտեսական ձեռնարկություն է, որը վարվում է սեփական կամ վարձակալված հողամասի վրա: Որպես կանոն, ունի ազարակի բնույթ: Ֆերմերային տնտեսության վարման հիմնական նպատակը շահույթ (դրամական եկամուտ) ստանալն է» (ՍՀ հանրագիտարան, հ. 12, էջ 638, ԲՍԷ հ. 27): Ստերեոտիպային մի ձեւակերպում, որը չի կարող արտացոլել բուն իրականությունը: Ավելին, նրանում զգալի է դասակարգային մոտեցումը, այնինչ գործ ունենք բնականոն երեւույթի, տնտեսական զարգացման օրինաչափ արդյունքի՝ գյուղացիական տնտեսության հետ:

Իսկ այսօր ՀՀ «Գյուղացիական եւ գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքի (ընդունվել է 1991 թ. հունվարի 22-ին) 2-րդ հոդվածը տալիս է գյուղացիական տնտեսության ավելի օբյեկտիվ սահմանում. «Գյուղացիական տնտեսությունը քաղաքացիների սեփականության վրա հիմնված գյուղատնտեսական մթերքների արտադրային արտադրությունն աղահովող իրավաբանական կազմակերպական միավոր է: Գյուղացիական տնտեսությունն ստեղծվում է կամավոր հիմունքներով»:

ՌԽՖՍՀ 1990 թ. նոյեմբերի 22-ի (ՌԽՖՍՀ 1990 թ. դեկտեմբերի 27-ի օրենքով կատարված փոփոխություններով հանդերձ) «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության մասին» օրենքի 1-ին հոդվածը տալիս է ավելի հանգամանալից սահմանում. «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունը համարվում է իրավաբանական անձի իրավունքներով օժտված իրավաբանական սուբյեկտ՝ ներկայացված առանձին քաղաքացիով, ընտանիքով կամ անձանց խմբով, որոնք իրականացնում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրություն, վերամշակում եւ իրացում գույքի եւ վարձակալած, ցմահ ժառանգական տիրապետման տակ գտնվող կամ սեփականությամբ իրենց պատկանող հողամասերի օգտագործման միջոցով: Գյուղացիական տնտեսությունն իրենից ներկայացնում է ազատ ձեռնարկատիրության մի, որն իրականացվում է տնտեսակա[illegible] շահ ստանալու սկզբունքով»:

Այս երկու սահմանումները, թվում է, լիովին ադառում են հարցը: Սակայն պետք է ընդունել, որ դրանք բոլորովին վերջերս են ձեւակերպվել, եւ դրանց վերաբերյալ հրապարակում դեռեւս չկան գիտական դատողություններ ու հիմնավորված վերլուծություններ: Ուստի կամա թե ակամա անհրաժեշտություն է առաջանում դիմել զարգացած երկրների փորձին:

Արտասահմանյան (արեւմտյան) փորձը

Որքան էլ տարօրինակ հնչի, այստեղ ակնկալիքները հիասթափեցնող են: Այսպես, համաեվրոպական օրենսդրությունը չի տալիս գյուղատնտեսական ձեռնարկության սահմանումը. ԵՏՀ-ի (EEC) հիմնադիր Հռոմի պայմանագրի (1957 թ.) 38-րդ հոդվածը գյուղատնտեսական գործունեության կապակցությամբ հռչակում է, որ խումբը գնում է հողագործության, անասնաբուծության եւ ձկնորսության բնագավառում ստացված արտադրանքի, ինչպես նաեւ սկզբնական մշակման արտադրանքի մասին, որն անմիջական կապ ունի այդ արտադրանքի հետ: Հռոմի պայմանագիրը լրացնում է մթերքների սահմանված ցուցակը, որը, սակայն, ոչ մի որոշիչ առանձնահատկությամբ աչքի չի ընկնում: ԵՏՀ-ի դիրեկտիվներում նույնպես պարզություն չկա: 1972 թ. ապրիլի 23-ին ընդունված ագրարային տնտեսությունների մոդեռնացման վերաբերյալ դիրեկտիվներն այդ հարցի պարզաբանումը թողնում են ազգային օրենսդրությունների վրա (Э. И. Павлова - «Государственное регулирование сельского хозяйства во Франции»):

Սակայն ազգային օրենսդրություններն այդ հարցում նույնպես պասիվություն են դրսեւորում: Այսպես, ֆրանսիական օրենսդրությունում չկա գյուղատնտեսական արտադրողի եւ գյուղատնտեսական գործունեության հասկացությունների հստակ պարզաբանում, իսկ դատական պրակտիկայում եւ իրավական դոկտրինայում հաստատված սահմանումները բավական լայն են եւ անորոշ, որպես գյուղատնտեսական արտադրող դիտվում է այն անձը, որն օգտագործում է գյուղատնտեսական արտադրության համար նախատեսված հողատարածք: Իսկ գյուղատնտեսական գործունեության սահմանազատման գլխավոր չափանիշը գործունեության մյուս տեսակներից համարվում է հողագործությամբ կամ անասնապահությամբ զբաղվելը՝ որպես գլխավոր մասնագիտություն: Ուստի հասկանալի է, որ այդ հասկացություններ գրեթե ոչինչ չասող սահմանումների դեպքում «գյուղացիական տնտեսություն» հասկացության բացակայությունը պատահական չէ:

Մինչ օրս շատ արեւմտյան երկրներում, այդ թվում եւ ԱՄՆ-ում, որպես գյուղացիական տնտեսության միակ որոշիչ առանձնահատկություն, այլ տիպի ձեռնարկությունների համեմատությամբ, առաջվա պես դիտարկվում է հողը: Տնտեսության այնպիսի տարբեր, ինչպիսիք են կապիտալը, մեքենաները, կառույցները, անասունները, սերմացուն, բեւեռ տնտեսավարման ատաղարեզում դրանց իրավական կարգավիճակի հարցերն բարդացմանը, ֆերմերության բնութագրման առումով շարունակում են երկրորդական դեր կատարել: Եւ ամերիկյան իրավաբանական գրականության մեջ որպես «farm»-ի հոմանիշ լայնորեն տարածված «land estate» (հողային ունեցվածք, տիրապետություն) տերմինը մեկնաբանվում է ոչ ավել, քան գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողային սեփականություն («Правовое регулирование экономической деятельности в империалистических и развивающихся странах»- под. ред. Б. Д. Клюкина, М, 1973): Ֆերման, այլ կերպ ասած, հողային սեփականություն է: Սա է գյուղացիական տնտեսության (կամ ինչպես ԱՄՆ-ում են ասում՝ գյուղատնտեսական ձեռնարկության) ոլաբտոնական ձեւակերպումը:

Չնայած օրենսդրական ձեւակերպման բացակայությանը, արեւմտյան գիտնականները, այնուամենայնիվ, փորձում են տալ գյուղացիական տնտեսության ընդհանուր հասկացությունը: Հիմնականում այդ հասկացության հիմքում դրվում են հետեւյալ 3 բաղադրատարրերը. 1) գյուղատնտեսական նշանակության հողամասի առկայությունը, 2) այդ հողամասից ինքնուրույն կերպով օգտվելը, 3) գործունեության բաղադրիչ բնույթը: Իսկ ահա ֆրանսիական իրավական դոկտրինան վաղուց ի վեր տարբերում է «տնտեսություն» հասկացությունը բառի նեղ եւ լայն առումով: Նեղ իմաստով տնտեսությունը հասկացվում է որպես իրերի ամբողջություն, որի գլխավոր տարր համարվում է հողամասը: Լայն իմաստով տնտեսությունը հասկացվում է որպես գործունեություն եւ իր մեջ միաժամանակ ներառնում է կոլեկտիվն ու գույքը: Այստեղ խոսքը գնում է նաեւ տնտեսության կառավարմանը եւ գործունեությանը մասնակցելու մասին:

Այսուհանդերձ, ոչ մի դոկտրինալ մեկնաբանություն չի փոխարինում օրենքի տառին:

Ինչո՞ւ է արեւմտյան փորձը «կաղում» խնդրո առարկայի հարցում

Պատասխանելով այս հարցին, սկզբից եւեթ պետք է ասել, որ ֆերմերային տնտեսության, ինչպես եւ ոչ մի բվով այլ հասկացությունների, համակողմանի եւ ամբողջական սահմանման բացակայությունը զարգացած արեւմտյան երկրների օրենսդրությունում պայմանավորված է առաջին հերթին այդ երկրների պատմական զարգացման առանձնահատկությամբ, ըստ որի՝ հոգուս տիրապետող բուրժուա դասի, իրավական դրույթները, նորմերը «ավելի շատ մեկնաբանվում էին, քան սահմանվում»: Հիշենք բեկոզ դասական նախադեղերը, որոնք այսօր էլ որոշ երկրներում իրավունքի աղբյուրի դեր են կատարում:

Նոր ժամանակներում դասակարգային մոտեցումը փոխարինվեց տնտեսական առաջընթացի պահանջներով, երբ մանրակրկիտ մշակված ձեւակերպումներն սկսեցին դիտվել աննդատակահարմար, անհարիր արագ կերպով զարգացող տնտեսության եւ դրա հետ մեկտեղ արագորեն փոփոխվող սոցիալ-տնտեսական պայմաններին: Արեւմտյան մասնագետներից շատերի կարծիքով, նման «կոշտ» օրենքները հանգեցնում են նրան, որ «կյանքն առաջ է գնում, իսկ օրենքներն ընդհանուր առմամբ դոփում են տեղում»: Արդյունքում օրենքների համեմատությամբ գործնական առաջնություն են ստանում ենթաօրենսդրական ակտերը:

Բացի այս ամենից, գյուղացիական կամ ֆերմերային տնտեսության հստակ սահմանման վերոհիշյալ բացակայությունը բացատրվում է նաեւ ստրատեգիական նկատառումներով, այսինքն՝ կախված այս կամ այն գործոնից, ֆերմերությունը կարող է լինել իրավունքի տարբեր ճյուղերի կարգավորման առարկա, այն ընկած կարող է լինել տարբեր օրենսդրությունների հիմքում: Այսպես, ֆինանսական օրենսդրությունում գյուղատնտեսական գործունեության սահմանազատման համար գլխավոր չափանիշ է հանդիսանում հողամասի նվազագույն տարածքը: Օրինակ, ըստ ԱՄՆ-ի 1964 թ. գյուղատնտեսական ցենզի («US Census of Agriculture, 1964», Wash, 1967, v. 1, էջ 1), «ֆերմա» է համարվում 10 ակրից ոչ պակաս մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողակտորը:

Բացի այդ, ընտանեկան տնտեսությունների պատասխանատվության նպատակով օրենսդիրը սահմանափակում է մտցրել գյուղատնտեսական արտադրության հասկացության մեջ. սահմանվում է ընտանի կենդանիներ պահելու նորմա, որի գերազանցման դեպքում բոչնաբույծները եւ խոզաբույծները դիտվում են արդյունաբերողներ եւ արդեն պետք է վճարեն առեւտրաարդյունաբերական հարկ:

Հարկային իրավունքում հողն արդեն դիտվում է որպես պասիվ տարր: Գյուղատնտեսական արտադրանքի վրա հարկ է դրվում որպես արդյունաբերական կամ առեւտրական գործունեությունից ստացված եկամտի, երբ գյուղատնտեսական գործունեությունն իրականացվում է որպես առեւտրական գործունեության շարունակություն: Եւ, ընդհակառակը, այն եկամուտը, որը գյուղատնտեսական արտադրողներն ստանում են իրենց արտադրանքի վերամշակումից, պահպանում է իր գյուղատնտեսական բնույթը: Վարկավորման դեպքում գյուղատնտեսական արտադրանքարտադրողի համար գլխավոր չափանիշ է համարվում անձնական մասնակցությունն անասունների բուծման եւ գյուղատնտեսական կուլտուրաների մշակման գործում: Դա հատկապես կարեւորվում է երկարաժամկետ վարկեր ստանալու համար:

Եզրահանգում

Վերոհիշյալ դիտարկումները մեկ անգամ եւս ընդգծում են, որ արտասահմանյան (թեկուզեւ հարուստ) փորձին ստեղծագործաբար պետք է մոտենալ:

Պետք է առաջին հերթին ելնել այն իրողությունից, որ Արեւմուտքն արդեն իսկ անցել է առաջընթացի մի պատկառելի փուլ, եւ այդ առումով այնտեղ գործող արդի արտադրահարաբերությունները եւ դրանք ամրագրող իրավանորմերը դեռեւս հեռու են Հեզանում միանշանակ կիրառություն ունենալուց: Դրա ցայտուն օրինակը հենց Արեւմուտքում քաղաքացիական իրավունքին կից առեւտրական իրավունքի առկայությունն է, առեւտրական օրենսգրքի գոյությունը:

Մյուս կողմից, մեզանում ֆերմերությունը ծագեց ոչ թե տարեայնորեն, այլ ներմուծվեց վերեւից. դեռ տարբերությունը, հանդես գալով որպես նոր տնտեսակարգի հիմքերը գցելու հեղինակ, պետք է առավել համակողմանի, ամբողջական ու պարզորոշ մոտեցում ցուցաբերեր խնդրո առարկային: Արդյունքում՝ գյուղացիական տնտեսության առավել մանրակրկիտ ձեւակերպումը մեզանում:

Սակայն որքան էլ դիտայացվի տվյալ սահմանումը, այն ի վիճակի չէ լցնելու հիշյալ ասպարեզում եղած իրավական վակուումը: Նոր արտադրահարաբերությունների ձեւավորմանը եւ ամրապնդմանը զուգընթաց նոր իրավական ակտերի (հիմնականում՝ ենթաօրենսդրական ակտերի) պահանջարկը կմեծանա: Եւ եթե գյուղացիական տնտեսության ներկա ձեւակերպումները շարունակեն էլ պահպանվել, ապա, այսուհանդերձ, ֆերմերության իրավական կարգավորումը դուրս կգա մեկ ճյուղի շրջանակից: Այս առումով նմանությունը Արեւմուտքին անխուսափելի է:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Իրավաբան

ԱՄՆ-ում սովորել ցանկացողներին

ԱՄՆ-ի կառավարությունը պատիվ ունի ներկայացնել ԱՄՆ-ի բուհերում սովորելու համար հատկացված 150 տեղերի վերաբերյալ ծրագիրը: Ծրագիրը, որը կոչվում է «Մասկիի անվան կրթաթոշակ», հնարավորություն է ընձեռում ամերիկյան համալսարաններում վերադասդասվել հետեւյալ մասնագիտություններով՝ իրավունք, բիզնես, տնտեսագիտություն, պետական կառավարում:

Հայաստանում եւ նախկին ԽՍՀՄ այլ հանրապետություններում դեմոկրատական վերափոխումներին նպաստող գիտական փոխանակման հետ առնչվող բոլոր նախաձեռնությունների նման այս կրթաթոշակների բաշխումը եւս իրականացվելու է բաց մրցութային հիմունքներով: Մրցույթին կարող են մասնակցել 40 տարին չլրացած այն անձինք, ովքեր ունեն բարձրագույն կրթության վկայական, վարժ տիրապետում են անգլերենին եւ չունեն անհրաժեշտ միջոցներ նման կրթություն ստանալու համար:

Փաստաթղթերի ձեւաթերման եւ լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել «Այրեքսի» գրասենյակ: Փաստաթղթերի հանձնման վերջին ժամկետը հոկտեմբերի 29-ն է:

Մեր հասցեն է.
Երեւան, Մարշալ Բաղրամյան 40,
Հայաստանի Ամերիկյան համալսարան
Սենյակ 10 (գրադարանի կողքին):

For those interested in professional study in the US

The Government of the United States of America is pleased to announce the 1994 Edmund S. Muskie Fellowship Program for qualified students from the countries of the former Soviet Union to enroll in graduate programs at US academic institutions. Approximately 150 Fellowships will be awarded for studying business administration, economics, law, and public administration at US universities.

Like other exchange initiatives which are to promote democratic changes in Armenia and other republics of the former Soviet Union the Muskie Fellowships will be issued on the basis of open competition. Anyone under the age of 40, holding an undergraduate degree (diploma), having English language proficiency, and lacking financial resources for study in the United States is eligible to apply.

An application form and further information may be obtained from the Yerevan IREX office.

THE APPLICATION DEADLINE WILL BE OCTOBER 29, 1993

You are welcome to contact us at the following address:
American University of Armenia
Room 10 (near the library)
Marshal Bagramian 40, Yerevan,
Republic of Armenia.

digitised by A.R.A.R.@

ԱՄՆ

Երկու միլիոն դոլար պայթյունի հեղինակների դիմաց

Այսոլիսի գումար են խոստանում ամերիկյան իշխանությունները Նյու Յորքում Համաշխարհային առեւտրի կենտրոնում պայթյունի գործողության դեկավարի հանձնման համար:

Անցյալ տարվա սեպտեմբերին Նյու Յորքի Քենեդիի անվան օդակայան Պակիստանից ժամանեց մի երիտասարդ Ազան Մոհամեդ անունով եւ իրաքյան անձնագրով: Անձնագրային հսկողության ժամանակ նա հայտարարեց, որ մուտքի վիզա չունի, եւ խնդրեց քաղաքական ապաստան:

Առհասարակ այսպիսի մարդկանց «հովանավորում է» արտագաղթի եւ հպատակագրման ԱՄՆ-ի վարչությունը, որտեղ նրանք հսկողության տակ են մնում մինչեւ նրանց խնդրանքի քննարկելը: Սակայն այն օրը, ինչպես դա հաճախ է պատահում, այնտեղ տեղ չկար, եւ Մոհամեդին թույլատրեցին մուտք գործել ԱՄՆ, նշանակելով նրա գործի քննարկման օրը: Նման ձեւով ԱՄՆ տարեկան թափանցում են հազարավոր օտարերկրացիներ:

Այժմ Մոհամեդի դեմ, որի իսկական անունն է Ռամզի Ահմեդ Յուսեֆ, գործ է հարուցված ս. թ. փետրվարի 26-ին Համաշխարհային առեւտրական կենտրոնում պայթյունի նախապատրաստման համար: Հետաքննությունների ֆեդերալ բյուրոն գտնում է, որ նա երկրից հեռացել է ահաբեկչական գործողությունից անմիջապես հետո, մտցվել է որոնվող գլխավոր հանցագործների ցուցակի մեջ, եւ նրան բռնելու համար նշանակվել է երկու միլիոն դոլար:

Հայտնի է դարձել, որ Յուսեֆը իրոք Իրաքի քաղաքացի է եւ որ Ազան Մոհամեդը նրա տասը ծածկանուններից վերջինն է: Զարմանալի է, թե Յուսեֆն ինչպե՞ս էր մուտք գործել պակիստանյան ինքնաթիռ, հաշվի առնելով, որ ինքնաթիռ նստելու ժամանակ նրա մոտ պետք է որ ստուգվեր ամերիկյան վիզայի առկայությունը: Պակիստանցիները եղվում են, որ վիզան եղել է:

Ամերիկյան օրենքը ավիաընկերության վրա պատասխանատվություն է դնում, եթե նա ԱՄՆ է բերում առանց վիզայի մարդու: Անցյալ տարի պակիստանյան ավիաընկերությունը 94 այդպիսի խախտում է կատարել եւ տուգանվել է 282 հազար դոլարով: «Սովորական է դարձել, ասում է ընկերության ամերիկյան ներկայացուցիչը, երբ ուղեւորը ինքնաթիռ է նստում օրինական փաստաթղթերով, իսկ հետո այն պատռում եւ դեն է նետում»:

Յուսեֆի հետ միասին Նյու Յորք էր ժամանել Ահմադ Մոհամադ Աջաջ անունով մեկը: Նա շատ հիշ էր նմանվում ինքդի, ու նրա անձնագիրն իրոք որ կեղծ էր: Ի տարբերություն Յուսեֆի, Աջաջին տեղն ու տեղը բանտարկեցին եւ նրա մոտ հայտնաբերեցին պայթուցիկ գործիքի տնային պատրաստման մասին մի ձեռնարկ, որի վրա հետագայում հայտնաբերվեցին Յուսեֆի մատնահետքերը:

Ինչպես գտնում է հետաքննությունը, Յուսեֆը տախտակամածի աշխատելու ժամանակ հաճախել էր Ջերսի-սիրիքում մզկիթ բացած կույր իմամ Օմար Աբդել Ռահմանին, որը ժամանակին մեղադրվել էր նախագահ Սադաթի սպանության մեջ, սակայն արդարացվել էր: Այստեղ նա ծանոթացել էր ոմն Մոհամեդ Սալամեհի հետ, որն անմիջապես մասնակցում էր ռումբի եւ ընդհանրապես պայթյունի նախապատրաստմանը:

Սալամեհը այժմ նստած է բանտում, սպասում է դատի, իսկ Յուսեֆն անհետացել է: Իշխանությունները չեն բացառում, որ Յուսեֆը այդ գործողության միակ մասնակիցը չէ, սակայն հրաժարվում են մանրամասն խոսել իրենց կասկածների մասին: ՏԱՍՍ

Իրան

ՄԵՋԼԻՍԸ ՀԱՍՏԱՏԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ

Երկօրյա վիճաբանություններից հետո իրանական խորհրդարանը (մեջլիսը) անցյալ շաբաթ հաստատեց երկրի կառավարության նոր կազմը: Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Ալի Ակբար Հաշեմի Ռաֆսանջանիի առաջադրած 23 թեկնածուներից մեջլիսը մերժեց միայն մեկին՝ Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Մոհսեն Նուրբախշին:

Իրանի նախագահը, սակայն, մեծ դժվարությամբ կարողացավ պաշտպանել կառավարության նոր կազմը: Չնայած այն բանին, որ նա մեջլիսում պահպանողական մեծամասնության պահանջով դեռ քվեարկությունից առաջ փոխեց վեց նախարար եւ կատարեց մի շարք վերադասավորումներ, խորհրդարանը քննադատության ենթարկեց թեկնածուների մեծամասնությանը: Ամենից շատ քննադատական դիտողություններ ստացավ նավթի եւ գազի այժմյան նախարար Գոլյամ Ռեզա Աղա-զադեն, որն այդ պաշտոնը զբաղեցնում է 1985 թվականից, եւ հանրապետության նախագահը դժվարությամբ համոզեց պատգամավորներին նրան թողնել կառավարության կազմում:

Ռաֆսանջանին խորհրդարանին զիջեց մեծ ափսոսանքով: Իրանական հեռուստատեսությամբ իր հանրային ելույթներում նա բազմիցս գոչաց, որ պահպանողական ուժերի ճնշմամբ իր բազմաթիվ կողմնակիցները չմտան նոր կառավարության մեջ:

Մեջլիսում քվեարկության ժամանակ Ռաֆսանջանին տրամադրված էր բավականին վճռականորեն եւ չէր ցանկանում առանց մարտի հանձնել եւ ոչ մի թեկնածություն: Պատգամավորների կողմից կատարված քննադատական դիտողությունների մեծ մասը նա անվանեց անհիմն եւ անարդարացի, իսկ ֆինանսների եւ տնտեսության նախարարի պաշտոնից հանված Նուրբախշին անմիջապես նշանակեց մի այլ կարեւոր պաշտոնի՝ փոխնախագահի տնտեսական քաղաքականության գծով: Պահպանողականների առարկություններին Ռաֆսանջանին պատասխանեց, որ Նուրբախշին Իրանում տնտեսական նորոգումների անցկացման գործում հսկայական փորձ ունի: Նրա շնորհիվ վերջին տարիներին Իրանում բարձրացավ արտադրանքի որակը, բյուջեի դեֆիցիտը 50 տոկոսից իջավ մինչեւ զրոյի, կատարվեց դրամանային բարեփոխում:

Չնայած այն բանին, որ Ռաֆսանջանին կարծես թե հաջողվեց խորհրդարանում պաշտպանել իր կողմից առաջադրված կառավարության կազմը, դեռ հայտնի չէ, կարո՞ղ է արդյոք նախարարների նոր կաբինետը վարել ինքնուրույն քաղաքականություն, որովհետեւ վերջին տարիներին իրանական նախագահի գործունեությունը ժողովրդականություն չի վայելում: Դրանով է բացատրվում պահպանողականների ակտիվությունը, որոնք իրենց կողմնակիցների համար պահանջում են նախարարական պորտֆելներ եւ Ռաֆսանջանիին չեն ուզում տալ գործողությունների ազատություն: Ավելի վճռական տրամադրված պատգամավորներն ընդհանրապես հայտարարում են, որ նոր կառավարությունում պետության ղեկավարը ոչիի հետեւի խորհրդարանի դիրեկտիվներին: Թերեւս այդպիսի խրավիճակ, երբ խորհրդարանը պահանջում է, որ իր մեծամասնությունը ներկայացված լինի գործադիր իշխանությունում, առաջին անգամ է ստեղծվում իսլամական վարչակազմի 15-ամյա պատմությունում:

Աջ իսլամականները գտնում են, որ կառավարության քաղաքականությունը ոչիի տգտրվի «իսլամի, շարիաթի եւ սոցիալական արդարության գաղափարներով»: Իսկ Ռաֆսանջանիի կուրսը չափազանց հեռու է այդ գաղափարներից եւ հեղափոխության «գաղափարական նահանջն է» դեղի Արեւմուտի շուկայական տնտեսությունը: Ուստի, չնայած, այն բանին, որ պահպանողականներն աջակցում են կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններին, ազատականացման քաղաքականության սոցիալական եւ մշակութային հետեւանքները նրանց համար անընդունելի են:

Ընդդիմադիրներից շատերը ժամանակին հուսով էին, որ Ռաֆսանջանին մի մարդ է, որն ընդունակ է անցկացնել տնտեսական եւ քաղաքական բարեփոխումներ, որը կարող էր հանգեցնել այն խիստ բարքերի մեղմացմանը, որոնք մտցվեցին 1979 թ. Իրանում Իսլամական Հանրապետության հռչակումից հետո: Սակայն նա չարդարացրեց նաեւ այդ հույսերը, չիա հոգեւորականությանը մշտական զիջումների գնալով:

Իր վարչության կառավարման նոր ժամկետում Ռաֆսանջանին թերեւս կշտամբանքի ընդառաջումների եւ զիջումների քաղաքականությունը: Սակայն միեւնույն ժամանակ Իրանի նախագահը քաղաքականությունում եւ տնտեսությունում կոչ է անում խիզախ գործողությունների, ընդելով, որ «ժամանակն է, երբ Իրանին անհրաժեշտ են խիզախ քայլեր»: «Սեգոդնյա», 20 օգոստոս, 1993

Լուրերի Հոսք

Լ. Կուչմա. Ուկրաինայի կառավարությունը վերջին օրերն է ապրում

«Նախարարների կաբինետը իր վերջին օրերն է ապրում», կիրակի օրը ազգային հեռուստատեսությամբ հայտարարեց Ուկրաինայի վարչապետ Լեոնիդ Կուչման: Նրա կարծիքով, Ուկրաինայի Գերագույն խորհուրդը չի ընդունի կառավարության տնտեսական ծրագիրը, որը խորհրդարանի հանձնաժողովներին ներկայացրեց օգոստոսի 27-ին: «Նույնիսկ եթե մենք ծրագրի նախապատրաստման համար հավաքենք աշխարհի լավագույն տնտեսագետներին, Գերագույն խորհուրդը դարձյալ այն չէր ընդունի», ասաց վարչապետը: Կուչմայի խոսքերով, խորհրդարանն անկարող է ընդունել կոնստրուկտիվ որոշումներ: Միակ ելքը կլինեն վաղաժամկետ ընտրությունները, գտնում է նա: «Դրանց նախապատրաստման ընթացքում խորհրդարանը պետք է իր ջանքերը բեւեռի ընտրությունների եւ սահմանադրության մասին նոր օրենքի նախապատրաստման վրա», ընդգծեց վարչապետը: Նրա կարծիքով, անցման ժամանակաշրջանում նախագահը պետք է ստանձնի օրենսդիր, իսկ կառավարությունը գործադիր պարտականություններ: Լեոնիդ Կուչման հայտնեց, որ հանգստյան օրերին Ուսաստանի վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինի հետ կայացած հեռախոսազրույցի շնորհիվ համաձայնություն է ձեռք բերվել մինչեւ երկու երկրների նախագահների սեղանների 3-ի հանդիպումը Ուկրաինայի գազամատակարարումը լրիվ ծավալով վերսկսելու շուրջը: ԻՏ

ԱՊՀ զինվորական փորձագետների խումբը Դուշանբեում

ԱՊՀ զինվորական փորձագետների աշխատանքային խումբը Ուսաստանի պաշտպանության փոխնախարար գեներալ-գնդապետ Բորիս Պյանկովի գլխավորությամբ օգոստոսի 31-ին բացվել Դուշանբե: Խմբի մեջ են Ուսաստանի, Ղազախստանի, Ուզբեկստանի եւ Կիրգիզստանի պաշտպանության նախարարությունների ներկայացուցիչներ: Ինչպես նշվում է, ԱՊՀ այդ երկրների զորաբաժինները կմնան տարածքային ռազմական սահմանում ԱՊՀ կոալիցիոն ուժերի մեջ: ԻՏ-ին տված հարցազրույցում Բորիս Պյանկովը, որի թեկնածությունը ԱՊՀ երկրների պաշտպանության նախարարների խորհուրդն առաջադրել է կոալիցիոն ուժերի հրամանատարի պաշտոնում, հայտնեց, որ աշխատանքային խմբի խնդիրը մասնավորապես դրանց տեղաբաշխման հնարավոր վայրերի որոշումն է: Բացի դրանից, գեներալի խոսքերով, ԱՊՀ զինվորական փորձագետները մշակելու են նաեւ Տաջիկստանի ղեկավարության հետ մեկտեղ լուծել զինծառայողների տեղաբաշխման եւ նրանց կենցաղի ապահովման հարցերը: ԻՏ

Կատարելի ռազմական հետախուզության ուսուցիչական հանձնաժողով

Ուսաստանի նախագահ Բորիս Եելցինը հանձնարարություն տվեց ռազմական հետախուզության բնագավառում փոխգործակցության վերաբերյալ պաշտպանության նախարարության ներկայացրած ռուս-տաջիկական հանձնաժողովի նախագծին: Այն նախօրոք լրամշակվել էր տաջիկական կողմի հետ: Նախագծով երկու երկրների պաշտպանության նախարարությունների համագործակցություն է նախատեսվում օպերատիվ եւ այլ միջոցառումներ անցկացնելիս, այդ թվում Տաջիկստանի տարածքում, եկեղով ազգային եւ կրոնական անվտանգության շահերից: Կողմերը պարտավորվում են չծավալել միմյանց դեմ ուղղված հետախուզական գործունեություն: Նրանք մտադիր են նաեւ հանդարտակցել ազգական հետախուզության կարգեր պատրաստելիս: Բորիս Եելցինի կարգադրությամբ Ուսաստանի պաշտպանության նախարարությանը հանձնարարված է բանակցել տաջիկական կողմի հետ եւ հանձնաժողովի հանձնելուց հետո ստորագրել այդ հանձնաժողովը: Այն ուժի մեջ կմտնի ստորագրման օրվանից: Գործողության ժամկետը հինգ տարի է: ԻՏ

Կիպրոս

Թուրքերն անհանգիստ են Եվրահամայնքին Կիպրոսի անդամակցությունից

ՄԱԿ-ի հովանավորությամբ մայիս-հունիսին տեղի ունեցած Կիպրոսի խնդրի կարգավորման բանակցությունների ձախողումից հետո իրավիճակը կղզում նորից մտավ իր ավանդական հունի մեջ: Հանձնաստաբար հանգիստ իրավիճակում հունական եւ թուրքական համայնքները շարունակում են պարբերաբար հարձակումներ գործել միմյանց դեմ: Թվում է, թե բանակցությունները բոլորովին էլ տեղի չէին ունեցել:

Ստեղծվում է հետաքրքիր իրավիճակ՝ նախկինի պես համաշխարհային հանրության համակրանքը մնում է հույների կողմը, առավել եւս, որ այնքան շատ բան խոսացող վերջին բանակցությունները ձախողվեցին թուրքերի մեղքով, այսպես կոչված Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության (ՀԿԹՀ) ղեկավար Ռաուֆ Դենքթաշը հրաժարվեց բանակցություններում ներկայացնել թուրքական համայնքը, քանի որ կարգավորման ծրագրի դեմ դուրս եկավ Դերվիշ Էրողլուի ղեկավարած կառավարությունը: Սակայն ժամանակի ընթացքում Նիկոսիայի կառավարությունը սկսեց լրջորեն անհանգստանալ նրանով, որ Կիպրոսի խնդրի չլուծվածությունը ՀԿԹՀ-ին թույլ կտա դուրս գալ միջազգային շարունակվող շրջափակումից եւ նվաճել առնվազն մասնակի ճանաչում:

Ուստի Կիպրոսի ղեկավարությունը որքան կարելի է հաճախ է աշխարհին հիշեցնում կղզու խնդիրների մասին: Հուլիսի վերջին Կիպրոսի նախագահ Գլավկոս Կղերիդեսը հանդիպեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ-պետությունների դեսպանների հետ եւ առաջարկեց, որ սեպտեմբերին ինչ-որ պարզություն մտցվի հետագա բանակցությունների վերաբերյալ, հակառակ դեպքում նա կդիմի ՄԱԿ-ի հատուկ բանաձեւի ընդունումը, որը պիտի դատապարտի Թուրքիայի եւ նրա դաշնակիցների խաղաքականությունը ՀԿԹՀ-ում:

Այնուհետեւ ՄԱԿ ուղղվեց մի նամակ, որում հունական համայնքի ղեկավարությունը պնդում է, որ Թուրքիան տանում է կղզում ժողովրդագրական իրավիճակի փոփոխման քաղաքականություն թուրք գաղթականների բնակեցման միջոցով: Կիպրոսի կառավարության տվյալներով, նրանց թիվն այսօր հասնում է 85 հազար մարդու: Բոլորովին վերջերս՝ հունական Ֆամագուստա քաղաքի օկուպացման 19-րդ տարեդարձի կապակցությամբ Կիպրոսի արտաքին գործերի նախարար Ալեքոս Միքաելիդիսը հայտնեց, որ քաղաք են ժամանել թուրքական զինվորներով մի քանի բեռնատար մեքենաներ, որոնք, նշելով իրենց «տոնը», թալանել են մի քանի դրամատուն, խանութներ եւ հյուրանոցներ: Կղերիդեսը վերջերս հանդես եկավ կղզու խնդիրների շուրջը Կիպրոսի եւ Հունաստանի բոլոր քաղաքական կուսակցությունների կոնֆերանս անցկացնելու մասին նախաձեռնությամբ:

Իսկ թուրքական համայնքի ղեկավարությանը, ըստ երեւույթին, նման «մանրուքները» չեն հուզում: Նրանց ավելի շատ անհանգստացնում է մի այլ բան՝ Կիպրոսի հնարավոր անդամակցությունը Եվրոպական համայնքին: Ակնհայտ է, որ եթե այն տեղի ունենա, իսկ Եվրահամայնքը ճանաչի միայն Նիկոսիայի կառավարությանը, առաջ ՀԿԹՀ-ն կհայտնվի էլ ավելի մեծ շրջափակման մեջ: Ռաուֆ Դենքթաշը վերջերս մի նամակ հղեց Եվրահամայնքի հանձնաժողովի նախագահ Ժակ Դելորին նախազգուշացնելով, որ անդամակցությունը «անօրինական» կլինեւ, քանի որ թուրք-կիպրոսյան կողմի հետ չեն խորհրդակցել: Դենքթաշը նաեւ հայտարարեց, որ այդ դեպքում Կիպրոսում կարգավորման մասին բանակցություններն այլեւս երբեք չեն վերսկսվի: Եվրահամայնքի հանձնաժողովն իր հերթին մտադիր է, եթե բանակցությունների ընթացքում որեւէ արտասովոր բան տեղի չունենա, Կիպրոսի ընդունելության հարցը քննարկել 1995 թվականի հունվարի 1-ին:

Ավելի շատ այդպես էլ կլինի: Առայժմ թուրքական համայնքի կողմից որեւէ ցանկություն չի նկատվում ինչ-որ ձեւով աշխուժացնելու խաղաղ գործընթացը: Իրականում այդի չի ընկնում նաեւ նոր ղեկավարությունը Անկարայում: Խաղաղ բանակցություններից Դենքթաշի հեռանալուց հետո ՀԿԹՀ-ի խորհրդարանում նրան դիմավորեցին «բուռն, երկարատեւ, չհանդարտվող ծափահարություններով», որը շատ բանի մասին է խոսում: ՏԱՍՍ

digitised by A.R.A.R.@

Լուրերի Հոսք

Ջոն Շալիկաշվիլու հայրը Նոբելյա՞կան

Նոբելյան հանձնաժողովների որոնումներով զբաղվող Սիմոն Վիզենտալի հեռատեսական կենտրոնը հայտնաբերել է փաստաթղթեր, որոնցից պարզվում է, որ ԱՍՏՕ-ի զորքերի գլխավոր հրամանատար Ջոն Շալիկաշվիլու հայրը 2-րդ աշխարհամարտի տարիներին ծառայել է Գերմանիայի էսէսական զորամասերում: Ջոն Շալիկաշվիլին ԱՄՆ-ում բանակային բարձրագույն պաշտոնի՝ շտաբների պետերի միացյալ կոմիտեի նախագահության բենեֆոնս է: Դմիտրի Շալիկաշվիլու զինվորական անցյալին առնչվող հաղորդումը հրապարակողների կարծիքով, Ջոն Շալիկաշվիլին, բնականաբար, իր հերթին չի կարող որևէ պատասխանատվություն կրել: Դմիտրի Շալիկաշվիլին, ազգությամբ վրացի, եղել է ցարական բանակի սպա, այնուհետև 20-ական թվականներին փախել է Լեհաստան, ծառայել այդ երկրի բանակում, իսկ նացիստների ներխուժումից հետո զորակոչել է օկուպացիոն զորքերի հետ, մարտնչել Արևելյան ռազմաճակատում: Դմիտրի Շալիկաշվիլին ունեցել է շտուրմբանֆյուրերի կոչում: ԱՄՆ-ը երբեմն չի թաքցրել, որ իր երկիր մուտք գործելն նախկին էսէսականներ: Դմիտրի Շալիկաշվիլին շրջանցել է այդ արգելքը: Ինչո՞ւ: Այժմ դա Սիմոն Վիզենտալի կենտրոնի հաղորդման առարկան ամենասուր հարցն է: Մարտ

Ելցինը եւ Կրավչուկը բերեւս ճնշարկեն Սեւաստոպոլի հարցը

Ինչպես ԻՏԱ-ին հայտնի դարձավ Սեւաստոպոլի զինվորական աղբյուրներից, հնարավոր է, որ Դիմիտրի սեպտեմբերի 3-ին կայանալիք Ռուսաստանի եւ Ուկրաինայի նախագահների հանդիպման ժամանակ ճնշարկելի Սեւաստոպոլը Ռուսաստանին երկարաձգ վարձակալման հանձնելու տարբերակ: Սակայն, այդ աղբյուրները չեն բացառում 100 տարվա վարձակալման հավանականությունը: Մինչդեռ Սեւաստոպոլի հայրենասիրական ուժերի բլոկի երկուշաբթի օրը հաղորդում կայացած ժողովի մասնակիցները հանդես են եկել հաղորդի Ռուսաստան վարձակալման դեմ: Նրանների կարծիքով, դա կնշանակի, որ Ռուսաստանը պաշտոնապես ճանաչում է Ուկրաինայի իրավունքը Սեւաստոպոլի՝ «ռուսական փառքի» հաղորդի նկատմամբ: ԻՏԱ

Կուչմա. Անհրաժեշտ են արտակարգ միջոցառումներ

Ուկրաինայի վարչապետ Լեոնիդ Կուչման խորհրդարանին առաջարկել է կառավարությանն օժտել լրացուցիչ լիազորություններով արտակարգ տնտեսական բարեփոխումներ անցկացնելու համար: Նրա խոսքերով, մինչ նոր սահմանադրության ընդունումը եւ առաջադեմ ընտրությունները հարկավոր է «ողջ օրենսդրական լիազորությունները վերադարձնել նախագահին, իսկ գործադիր իշխանությունը կենտրոնացնել Նախարարների խորհրդում: Կուչմայի խոսքերով, նա «կողմնակից չէ արտակարգ իրավիճակ մտցնելուն, ինչպես շատերն են ներկայացնում»: Բայց «ներկայումս տնտեսության մեջ անհրաժեշտ է տասներեք միջոցներ ձեռնարկել»: ԻՏԱ

Ուժերը վերականգնելով, Քլինթոնը վերադարձել է

ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնը կիրակի օրն ավարտեց կարճատեւ ամառային հանգիստը Մասաչուսետսի նահանգի ծովափից 7 կմ հեռու գտնվող Մարտաս Վինյարդ կղզում եւ վերադարձավ Վաշինգտոն: Նախագահի արձակուրդը տեւեց ընդամենը 11 օր, որի ընթացքում Քլինթոնը, որը վերջին մի քանի տարում իրեն բույլ չի տալիս երկարատեւ ամառային հանգիստ, խաղում էր գոլֆ, կնոջ եւ դստեր հետ զբոսնում զբոսանավով, որում խեղդեցին ծի քշում: Ինչպես նշում է Ասոշիեյթեդ Պրես լրատվական գործակալությունը, Վաշինգտոն վերադառնալուց հետո նախագահին «սպասում են հաղթական լարված ճակատամարտեր», ճանաչողության սենատում ազգ առեւտրի հյուսիսամերիկյան պայմանագրի վավերացման հարցի եւ առողջապահության հանձնաժողովի բարեփոխման նախագծի առնչությամբ:

ԱՐՄԵՆ ՊԱՊԵՍԻՆՅԱՆ

Մշակույթ

«...Երբ հոգիդ պատրաստ ըլլա»

1976 թ. Վիլյամ Սարոյանը վերադարձավ հայրենիք ժամանեց: Այս անգամ նրա տպավորությունների շղթան հարստացավ մի առանձնահատուկ օղակով եւս: Մայր բատրոնում դիտեց «Իմ սիրտը լեռներում է» իր բատերախաղի բեմադրությունն առաջին ներկայացումից տասնհինգ տարի անց: Դիտեց, հիացավ Վ. Աճեմյանի այս զողտրիկ բեմադրությամբ՝ «հրաշք» համարելով այն: Ներկայացման մասնակիցներից էր եւ Էդգար Էլբակյանը, ոչ հիմնական, ոչ նույնիսկ երկրորդական դերի դերակատար, պարզապես մասնակից, որ բեմ էր գալիս մի խումբ մարդկանց հետ: Բառեր չուներ: Բեմում եղած միջոցին երգում էր Առնո Բաբաջանյանի հայրենակցի «Իմ սիրտը լեռներում է» երգը, եւ միայն այսքանը:

Ներկայացումից հետո գրողի դասվին տված համեստ ճաշկերույթին սեղանակիցների հայացքներն ուղղված էին Սարոյանին՝ իրենց ստեղծածի գնահատականի ակնկալությամբ:

– Ան ո՞վ կերգեր «Իմ սիրտը լեռներում է» երգը, հարցրեց Վ. Սարոյանը:

Պատասխանը դեմին ոտի ելավ հիսնամյա Էդգարը:

– Կինդրեմ նորեն երգե, ասաց Սարոյանը, միայն թե երբ հոգիդ պատրաստ ըլլա...

Իր բեմական կյանքի քառասուն տարիներին Էդգարը երբեք բեմ չբարձրացավ անդաստրաս հոգով, եւ միայն այդ շիկացած հոգով նա կերտեց իր երեւելի բեմական կերպարները: Գոգոլի Խլեստակովի անձնավորումը Պատանի հանդիսատեսի բատրոնում կատարյալ ելույթ դարձավ հայ բեմում: Զարմանալի դյուրաթիռ, անկեղծ, անմիջական, կատակերգական գույներից շաղախված, հմայիչ ու առինքնող, հեղինակին հարազատ կերպար էր Էդգարի Խլեստակովը, եւ արտիստական հմայքն էր մեծ:

Ծնունդով թիֆլիսեցի էր Էդգարը: Հայտնի է, որ արեւելահայ դերասանները մեծ դժվարությամբ են հաղթահարում արեւմտահայերենը բեմում, ավելի ստույգ չեն կարողանում հաղթահարել: Էդգարը դյուրությամբ էր հաղթահարում, հավանաբար երաժշտական բացառիկ լսողության շնորհիվ: Նա կարող էր երեւելի երգիչ դառնալ, սակայն ընտրեց դրամատիկական թատրոնի բեմը: Երաժշտությունը մնաց նրա արվեստի անտրոհելի շաղախը: Հիրավի, կոնցերտային հնչեղություն ուներ դերասանի Գիրոն Սունդուկյանի «Պեղոյի» աճնչյանական բեմադրության մեջ, որը դարձավ նրա ստեղծագործության կիզակետը: Գիրոյի կերպարում դերասանը համադրեց իր արվեստի բյուրեղյա մաքրությունը, կերպարային գերազանց զգացողությունը, հոգեբանական անցումների, աղդումների անսխալականությունը: Գիրոն լինելիության արվեստի բացառիկ օրինակ էր: Այդպիսին էր եւ Տարելինը՝ Սուխովո-Կոբիլինի «Դատական գործում», որին դերասանը հաղորդեց ողբերգական հնչեղություն: Մի կատարյալ դաշնություն էր Տարելինը Ջանիբեկյան-Վառավինի հետ, որոնցից այնքան էլ հաճախ չի պատահում մեր բեմերում: Էդգարի մեծակտավ ստեղծագործություններից էր Թոփազը Մ. Պանյոլի նույնանուն պիեսի բեմադրության մեջ, որին պատկերելը դահանջում է դերասանական մեծ ուժ, քանզի դերասանը միեւնույն ներկայացման մեջ պետք է ստեղծի երկու հակոտնյա բնավորություն. խեղճ ու կրակ, առաքինի ուսուցիչը փոխվում էր հզոր ու դաժան ֆինանսիստ տիրակալի: Էլբակյանը հոգեբանական հավատի անցումներով սպանում էր իր մեջ Թոփազի առաջին ես-ը, վերածում երկրորդ ես-ին: Փոխակերպման այս ընթացքը Էլբակյանը պատկերում էր ցնցող ուժով: Հոգեբանական բարդ կերպար էր եւ Էդգարի Իլը Դյուրենմաթի «Մեր կնոջ այցը» հեռուստատեսային բեմադրության մեջ:

Էդգար Էլբակյանը մեր այն սակավաթիվ դերասաններից էր, որ գիտեր հանդիսատեսին պարզելել հրաշք-ակնթարթներ: Գ. Հարությունյանի «Խաչմերուկ» պիեսի բեմադրության մեջ խաղում էր դարզ աշխատավոր Մուշեղի ոչ մեծածավալ դերը: Ունկնդրում էր բանաստեղծի տողերը.

Անց են կենում շուրջս մարդիկ,
Շուրջս դեմքեր, հազար-հազար...

եւ հրճվանքով արձագանքում. «Գատղար, իդա մեր Չարենցն ի»: Բանաստեղծի անվան արտաբերման մեջ դերասանը ներդնում էր այնքան լույս ու ջերմություն, որ դառնում էր հանճարեղ բանաստեղծի հանդեպ ժողովրդի տածած հավաքական սիրո խորհրդանիշ: Այլ կերպ ասած, Էդգարը գտել էր դերասանական արվեստի ամենամեծ գաղտնիքը, արվեստի ընդհանրացնող զորությունը: Այդ կերպարը Բաղդասարն էր Ստեփան Զորյանի «Ջրհորի մոտ» պատմվածքի հեռուստատեսային բեմադրման մեջ: Այդքան հողեղեն, միաժամանակ այդքան երկնային, անբասիր հոգու, որպիսին Էդգարի Բաղդասարն էր, սակավ կարելի է հանդիպել կինոդուստաքի վրա, նաեւ բատրոնի բեմում: Էդգարի Բաղդասարը բնության զավակ հայ գեղջուկն էր անխառն ու նախասկիզբ մաքրությամբ, որն ընկալվում էր իբրեւ մարմնացած բողոք անարդար աշխարհի ու պատերազմական արհավիրքների դեմ: Հայ աշխատավորի, խաղաղության կարոտով լցված մարդու մարմնացումն էր Էդգարի Բաղդասարը՝ այնքան հավատի ու բնական, որ ջնջվել էր դերասանի անձը, կար արվեստի կատարյալը...

Տարաժամ հեռացավ Էլբակյանը կյանքից, երբ լի էր ստեղծագործ ուժերով, ու դեռ ինչ գեղեցկություններ կարող էր արարել նա: Այն, ինչ ստեղծեց Էդգարը իր կարճ անցումին, կմնա բանկ ավանդ հայոց բատրոնի տարեգրքում:

ԳԵՎՈՐԳ ԱԲԱՋՅԱՆ

ԱԶԳ - ՄԱՐԶԱԿԱՆ

ՄՐՑԱՎԱԶՔԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ է

Հեռացված հերթական խաղում խոշոր հաշվով հաղթանակ տարավ չեմպիոնի կոչման եւս մեկ հավակնորդ՝ ՀՄԸՄ-ն, որը 6-1 հաշվով հաղթեց «Երազանքին», այն դեռեւում, որ 1-ին կեսն ավարտվեց 0-0: Գոլերի հեղինակներ դարձան Ա. Ամետիսյանը (48), Գ. Հովհաննիսյանը (50,71), Ս. Պողոսյանը (62, 65), Վ. Ամետիսյանը (88) բոլորն էլ ՀՄԸՄ-ից եւ Դահիրամանյանը (68, 11 մ «Երազանք»):

Առաջնության աղյուսակն սեպտեմբերի 1-ի դրությամբ

	Մ	Խ	Հ	Ո	Պ	Գ	
1. Բանանց	24	14	12	0	2	60-10	
2. Շիրակ	22	14	11	0	3	51-13	
3. ՀՄԸՄ	22	13	11	0	2	44-18	
4. Արարատ	22	12	10	2	0	43-5	
5. Վան	19	14	9	1	4	42-18	
6. ՀՄՄ-ՖԻՄՍ	13	14	6	1	7	29-27	
7. Կանազ	13	14	6	1	7	20-25	
8. Ցեմենտ	13	13	5	3	5	18-21	
9. Երազանք	12	14	5	2	7	25-33	
10. Նաիրի	12	14	5	2	7	13-30	
11. Ղվարքոց	9	14	4	1	9	15-33	
12. Իմպուլս	8	14	4	0	10	21-46	
13. Քասախ	8	14	3	2	9	14-56	
14. Մալաթիա Կ.	5	14	1	3	10	8-41	
15. Կոտայք	4	14	2	0	12	18-45	

Առաջնության 2-րդ շրջանի 1-ին խաղերն ավարտվեցին մեր ֆուտբոլիստների համար: Որոշ թիմեր այն օգտագործեցին արտասահմանյան մրցաշարերին մասնակցելու համար, ոմանք էլ շարունակեցին իրենց պայքարը առաջնությունում: Չէ որ առաջին շրջանի 17 հանդիպումներ հետաձգվել էին եւ մնում էր տարկուսել, թե այս կարճ ժամանակահատվածում հնարավոր կլիներ անցկացնել բաց թողնված բոլոր հանդիպումները: Ինչեւէ, ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիան կարողացավ կազմակերպել այդ հանդիպումները, իսկ առաջին շրջանից մնացած երկու հետաձգված հանդիպումները կանցկացվեն սեպտեմբերի 10-ին՝ ՀՄԸՄ-«Արարատ» եւ հոկտեմբերի 2-ին «Ցեմենտ»-«Արարատ»:

Այսօր ՀՄՄ-ՖԻՄՍ-«Նաիրիտ» հանդիպումով սկսվում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն խմբի 2-րդ առաջնության 2-րդ շրջանը:

Վաղը կմրցեն
«Իմպուլս»-ՀՄԸՄ
«Կոտայք»-«Վան»
«Շիրակ»-«Ցեմենտ»
«Արարատ»-«Մալաթիա-Կիլիկիա»
«Ղվարքոց»-«Քասախ»
«Կանազ»-«Երազանք»

Բոլոր հանդիպումները կսկսվեն ժամը 17-ին: ■

Մայքլ Լաուդրուպը վերադառնում է հավաքական

Դանիայի հավաքական. Շախից առաջինը Մայքլ Լաուդրուպը

Դանիացի հանրահայտ ֆուտբոլիստ Մայքլ Լաուդրուպը, Եվրոպայի վերջին առաջնությունում փայլատակած Բրայան Լաուդրուպի ավագ եղբայրը, որը հանդես է գալիս Իսպանիայի չեմպիոն, եվրոպական երկրների անցյալ տարվա չեմպիոնների գավաթակիր «Բարսելոնի» կազմում, որոշել է կրկին վերադառնալ ազգային հավաքական:

Ինչպես հայտնի է, Դանիայի հավաքականի գլխավոր մարզիչ Նիլսենի հետ ունեցած տարաձայնությունների պատճառով Մայքլ Լաուդրուպը 1990 թ. հեռացել էր հավաքականից:

29-ամյա ֆուտբոլիստը ոչ մի բացատրություն չտվեց իր վերադարձի կապակցությամբ: Սակայն Մայքլ Լաուդրուպի Դանիայի հավաքականն անցյալ տարի նվաճեց Եվրոպայի չեմպիոնի կոչումը: Բայց հիմա աշխարհի առաջնության 2 ուղեգրի համար եվրոպական 3-րդ ընտրական խմբում անողոք պայքար է գնում Իռլանդիայի, Իսպանիայի եւ Դանիայի հավաքականների միջեւ, եւ փորձառու Մայքլ Լաուդրուպի ներկայությունը շատ պետք է: Նա վերջերս իր եղբոր՝ Բրայանի հետ, որը հիմա հանդես է գալիս «Միլանի» կազմում, օգնեց Դանիայի հավաքականին 4-0 հաշվով հաղթելու Լիտվայի հավաքականին:

ԳՐԻԳՈՐ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
Վալանս, Ֆրանսիա

Լոս Անջելեսի «Արարատը» շարունակում է իր մրցաշրջագայությունը

Հայաստանում մրցաշրջագայող Լոս Անջելեսի «Արարատ» թիմը, որը հիմնականում համալրված է Հայաստանից արտագաղթած ֆուտբոլիստներով, 3-րդ ընկերական հանդիպումն անցկացրեց մեր հանրապետությունում: «Հրազդան» կենտրոնական մարզադաշտում նա իր ուժերը չափեց Երեւանի «Արարատի» հետ: Մինչ այդ հյուրերը հանդես էին եկել Գյումրիում, որտեղ մրցել էին «Առագածի» հետ: Խաղն ավարտվել էր ոչ-ոքի՝ 1-1: Երեւանի «Արարատի» հետ մրցավեճում հյուրերի խնդրանքով իրենց կազմում խաղում էր նաեւ «Արարատի» նախկին ավագ Ասոն Խաչատրյանը, որը Ֆրանսիայից վերադառնալով գտնվում է արձակուրդի մեջ: Հենց սկզբից հարկ է նշել, որ Ասոն Խաչատրյանի առկայությունը զգալիորեն ուժեղացրեց հյուրերի դաշտանությունը: Սկզբնավանքով, դժվար էր դիմակայել մեր առաջատար ակումբի սպացիկ գոռհներին: 25-րդ րոպեին Արա Մարկոսյանը առաջ մղեց երեւանցիներին: Քիչ անց հաշիվը կրկնապատկեց Արթուր Քոչարյանը: 1-ին կեսի վերջին րոպեին հյուրերից 1-ին դասախաղ գոլը խփեց Արամայիս Հովհաննիսյանը: 2-րդ կեսում անվերադարձով այդի ընկավ խորից հարձակվողներին միացած Ասոն Խաչատրյանը, բայց «Արարատի» գլխավոր ռմբարկու Արմեն Շահգելդյանը գլխի հարվածով, այնուամենայնիվ, 3-2 հաշվով հաղթանակ բերեց երեւանցիներին:

Նախապես ծրագրված Լոս Անջելեսի «Արարատի» հանդիպումը «Արարատ-73-ի» հետ չի կայանա: Հյուրերը հավանաբար վերջին խաղն անցկացնեն Եղվարդում, որտեղ նախատեսվում է խաղ-հանդիպում «Ձորագեղի» հետ: ■

Եթե տպեցիկայի աշխարհի 4-րդ առաջնությունում երկրների նվաճած մեդալները (միայն ոսկե)

	Ո	Ա	Բ	Ը
1. ԱՄՆ	13	7	6	26
2. Չինաստան	4	2	2	8
3. Ռուսաստան	3	8	5	16
4-5. Մեծ Բրիտանիա	3	3	4	10
4-5 Քենիա	3	3	4	10
6. Գերմանիա	2	2	4	8
7. Իսպանիա	2	2	2	5
8. Կուբա	2	1	0	3
9. Ֆինլանդիա	1	2	0	3
10. Ճամայկա	1	1	3	5
11-12 Եթովպիա	1	1	1	3
11-12 Ուկրաինա	1	1	1	3
13. Նամիբիա	1	1	0	2
14-15. Ալժիր	1	0	1	2
14-15 Ճապոնիա	1	0	1	2
16-20. Նորվեգիա	1	0	0	1
16-20 Շվեդիա	1	0	0	1
16-20. Մոզամբիկ	1	0	0	1
16-20 Չեխիա	1	0	0	1
16-20. Տաջիկստան	1	0	0	1

Անդրե Աղասու ինքնաթիռը

Աշխարհահռչակ թենիսիստ Անդրե Աղասին վերջերս գնել է անձնական ինքնաթիռ, որով ճամփորդում է ԱՄՆ-ի շատ քաղաքներ, տարբեր մրցաշարերի մասնակցելու համար:

Եթե մի օր օդում տեսնեք ԱԱ-792 համարանիշ կրող փոքրիկ ինքնաթիռը, իմացեք, որ նրա մեջ է Անդրե Աղասին: Ցինցինատիի մրցաշարում (ԱՄՆ) հասնելով մինչեւ կիսաեզրափակիչ, Աղասին համաշխարհային դասակարգման ցուցակում 6 աստիճանով վեր բարձրացավ եւ հիմա զբաղեցնում է 22-րդ տեղը:

Աղասին Ցինցինատիում 1-ին անգամ ուժերը փորձեց զուգախաղերում եւ ընկերակցելով չեխ կորդայի հետ, եզրափակիչում հաղթեց էդբերգ-Հոլմ (Շվեդիա) զույգին ու արժանացավ խաղարկված գավաթին:

Բանկը վարում է ՍՈՓՈՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Մոտակա դրամական ռեֆորմի հետեւանքներից ազգաբնակչության շահերը պաշտպանելու նպատակով, «ՄԵՐԿՈՒՐԻ» ձեռնարկությունը երկու շաբաթով հայտարարում է 1961-1992 թթ. թողարկման թղթադրամների ընդունում 6 ամիս ժամկետով, որի դիմաց առաջարկում է 105%:

Փաստորեն Ձեզ հնարավորություն է ընձեռվում ոչ միայն կրկնապատկել Ձեր կարողությունը, այլեւ, փոխել Ձեր տրամադրության տակ գտնվող հին թողարկման թղթադրամները նորերով:

ENTERPRISE Mercury

Երեւան, Սայաթ Նովա 19, «Անի» հյուրանոց, 6-րդ հարկ, 636 սենյակ հեռ. 59-46-36

Լուրերի Հոսք

Շեւարդնաձեն կուսակցություն է սարքում

Վրաստանի ղեկավար Էդուարդ Շեւարդնաձեն ռադիոյով ունեցած հարցազրույցի ժամանակ հայտնել է, որ մտադիր է կազմել սեփական կուսակցություն եւ ձեւավորել խորհրդարանական մեծամասնություն: Այդ բանին է նրան դրդել ներքին պատերազմների եւ ամբողջականության միտումների դեմ քաղաքական երաշխիքներ ունենալու անհրաժեշտությունը: Շեւարդնաձեն նշել է, որ խորհրդարանի վերջին «հուզումների» եւ նախկին նախագահ Գամսախուրդիայի կողմնակիցների ակտիվացման պատճառը Աբխազիայում խաղաղության հաստատումն է: «Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ Վրաստանում անդայման պետք է կռվեն», ցավով ասել է նա: Վրացական ղեկավարը հայտարարել է, որ օգոստոսի 28-ին զվիադականների կողմից Սենակի քաղաքի գրավումը «կարող է ունենալ ամենածանր հետեւանքներ, ամբողջ Վրաստանը կարող է ոտքի կանգնել այդ արկածախնդրության կազմակերպիչների դեմ»: ԻՖ

Ուկրաինայում ռազմական հետախուզությո՞ւն

Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կրավչուկի հրամանագրով ստեղծվել է Ուկրաինայի պաշտպանության նախարարության ռազմական հետախուզության գլխավոր վարչություն: Առդեն սկսվել է դրա առանձին ստորաբաժանումների կազմավորումը, մասնավորապես գործում են ռադիոտեխնիկական հետախուզության զորամասերը, կատարվում է սպայական կադրերի ընտրություն ու պատրաստություն, համալրվում եւ ստեղծվում են հատուկ նշանակության ջոկատներ: ԻՖ

Աբխազիի բնակչությունը 2000 թվականին

2000 թվականի սկզբներին մեր մոլորակի բնակչության ավելի քան 40 տոկոսը կապրի խոշոր քաղաքներում: Այս տվյալներն են բերվում ՄԱԿ-ի Ազգաբնակչության ֆոնդի զեկուցագրում, որից քաղվածքներ են հրատարակվել ամերիկյան «Ֆորբյդ» շաբաթաթերթի վերջին համարում: 1950-ական թթ. աշխարհի ամենախտաբնակ 10 շրջաններից յոթը գտնվում էր զարգացած երկրներում: Առաջիկա տարիներին, նշվում է զեկուցագրում, այդ միտումը կփոխվի. 10 խտաբնակ շրջաններից յոթը, ընդհակառակը, կգտնվի զարգացող երկրներում: Բնակչության թվով ամենամեծ քաղաքները 2000 թ. կդառնան Մեխիկոն (25.6 մլն մարդ), Սաո Պաուլուն (22.1 մլն), Տոկիոն (19 մլն), Շանհայը (17 մլն), Նյու Յորքը (16.8 մլն), Կալկաթան (15.7 մլն), Բոմբեյը (15.4 մլն), Պեկինը (14 մլն), Լոս Անջելեսը (13.9 մլն) եւ Ջակարտան (13.7 մլն):

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ

3 դեմոկրատներ ազատ արձակվեցին

Նիգերիայի ժամանակավոր կառավարությունը հրամայել է արձակել հուլիսին կալանված 3 դեմոկրատ առաջնորդների: Երկրի նախկին ռազմական ղեկավար Բաբանգիդային անցած շաբաթ փոխարինելուց հետո սա երկրի ժամանակավոր ղեկավար Շոնեկանի առաջին մեծ գործողությունն է: Մինչդեռ արհմիությունները գործադուլ են կազմակերպել երեսուն Շոնեկանի ռազմական միջոցներով այդ պաշտոնում հաստատման դեմ: ■

Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841

Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863

Apple® Macintosh® համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի

Azg armenian daily

Editor
H. AVEDIKIAN / phone: 521635

47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Թերթի ձեւավորումն եւ տարոտեսակների հեղինակ ՊԱՎԵԼ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Պ. Սևակյանի անվան տպարան – Հայրապետյան հրապարակ, Երեւան 23 Սիսակյան 2 Գրանցման թիվ 65. Դասակ 69149. Տպաքանակ 36 000. Պատվեր 1583. Ստորագրված է տպագրության՝ 31.8.1993

digitised by A.R.A.R.@